

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Աղասի ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

**ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆԻՑ**

ԵՐԵՎԱՆ - 2002

## Ներածություն

Աղքատության հիմնախնդիրը հետխորհրդային տարածքում ձեւավորված անկախ պետությունների սոցիալական բնույթի հիմնահարցերի մեջ առանցքայիններից է: Ընդհանրապես այն բնորոշ է անցումային շրջանում մտած հասարակական-քաղաքական համակարգերին: Իհարկե, կախված անցման շրջանում վարվող քաղաքականությունից եւ դրա իրականացման հաջողությունից, աղքատությունը տարբեր երկրներում ունենում է տարբեր դրսեւորումներ՝ ըստ խորության, սրության ու տարածվածության աստիճանի: Հայաստանում աղքատության ձեւավորումը, որը սկսվեց արդեն 1991-1992 թթ. ստացավ տարերային ու անկառավարելի բնույթ՝ անցման շրջանում որդեգրված քաղաքականության հետեւանքում: Մասնավորապես, աղքատության ձեւավորման վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ 1991-1996 թթ. որդեգրված պետական կառավարման եւ տնտեսական ոլորտներում իրականացված քաղաքականությունը:

Տնտեսական ոլորտում, Հայաստանի կառավարությունը որդեգրելով այսպես կոչված ազատական քաղաքականություն, անցումային շրջանում փաստորեն առաջնային համարեց տնտեսական ոլորտի բարեփոխումների իրականացումը՝ լիովին անտեսելով դրա հնարավոր անդրադարձերի հավանականությունը հասարակական կյանքում: Հետեւանքը եղավ այն, որ մեզանում ձեւավորվեց մի պետություն, որի ողջ մտահոգությունը հարուստների խավ ձեւավորելու միջոցով տնտեսության անցման կազմակերպումն է պլանայինից շուկայականի: Սակայն, խնդիրն է, որ շուկայական տնտեսությունը այն համակարգերում, որոնցում ձեւավորված փաստ է, գործում է հասարակական եւ քաղաքական համակարգերի հետ սերտորեն միահյուսված եւ համաձայնեցված ձեւով: Աշխարհում դեռեւս հայտնի չէ որեւէ նորմալ գործող շուկայական տնտեսություն, որը չի զուգորդվում ժողովրդավարական քաղաքական համակարգով եւ քաղաքացիական հասարակությամբ: Այս երեք գործոնները փոխկապակցված գործոններ են եւ եթե անցման շրջանում շեշտադրվում է սրանցից միայն մեկը, իսկ քաղաքական եւ հասարակական ոլորտները համարվում են երկրորդական, ապա ազատ շուկայի ձեւավորումը անխուսափելիորեն ձախողվում է: Սա ապացուցման կարիք չունեցող փաստ է, որի հաստատումը տալիս է ազատ շուկայի ձեւավորման հարյուրամյակների փորձ ու-

նեցող հասարակությունների պատմությունը:

Ներկայումս Հայաստանում աղքատությունը վեր է ածվել հասարակության մեծամասնությանը բնորոշ մի երեւոյթի, որից դուրս գալը ժողովուրդն արդեն համարում է անհավանական եւ որ ամենից վտանգավորն է՝ ժողովրդի մեջ արդեն ձեւավորվել է իր վիճակի նկատմամբ խոր հարմարվողականություն: Իսկ եթե կա այդ վիճակից դուրս գալու որեւէ ելքի փնտրտուքի փորձ, ապա դա համենայն դեպս չի կապվում Հայաստանի հետ, եւ մարդիկ աղքատության հաղթահարման ուղին տեսնում են Հայաստանից փախուստի եւ այլ երկրներում բնակություն հաստատելու մեջ: Հայաստանի սահմաններում անելանելիության եւ ելքը Հայաստանից փախուստի այս իրավիճակը արդեն լուրջ վտանգ է ներկայացնում, քանի որ նպաստում է արտագաղթի ծավալների աճի միտումի ձեւավորմանը եւ հատկապես կարող ու աշխատունակ մերուժի արտագաղթին: Վիճակի աղետալիությունը ակնառու է դառնում մարզային բնակավայրերում դիտարկումներ իրականացնելիս: Այսօր Հայաստանում մեծամասնությունն են կազմում այն գյուղերը, որոնցում երիտասարդության եւ միջին աշխատունակ տարիքի մարդկանց, հատկապես հայ հասարակությունում սոցիալապես ու տնտեսապես առավել ակտիվություն ցուցաբերող տղամարդկանց սեռային խմբում գերակշռում է բարձր տարիքային խումբը: Այսօր մենք ունենք ժողովրդագրական տեսանկյունից ոչ միայն ծերացող գյուղեր, այլև ենթաշրջաններ ու ամբողջական մարզեր: Ժողովրդագրական այս աղետալի պատկերը ուղղակիորեն աղքատության հետևանքներից է եւ կապված է ստեղծված այն իրավիճակի հետ, որ աղքատությունը Հայաստանում ձեւավորված տնտեսական ու քաղաքական անտանելի իրավիճակի պատճառով պարզապես հնարավոր չէ հաղթահարել: Ժողովրդի մեջ տարածված մտայնության համաձայն, Հայաստանում մնում են այն մարդիկ, ովքեր կամ շատ հարուստ են, կամ շատ անճար ու անխելք: Տարածված կարծիքի համաձայն, երեխաների բարվոք ապագայով քիչ թե շատ մտահոգվածները, որոնք չեն հաշտվել իրենց խղճուկ գոյավիճակի անելանելիության հետ, մտածում են Հայաստանից հեռանալու մասին: Ըստ էության, իրականությունը նույնպես հաստատում է այդ մտայնությունը: Հայաստանն այսօր արդեն վեր է ածվել շատ հարուստների ու շատ աղքատների երկրի: Միջին տնտեսական, հասարակական ու քաղաքական կարողություններով ու դրանց մատչելիության միջին աստիճանով

բնութագրվող խավերը կազմում են հասարակության չնչին փոքրամասնությունը: Իսկ առանց հասարակական միջին խավի գոյության, ըստ էության հասարակությունը ի վիճակի չի լինելու հաղթահարել այն համատարած ճգնաժամը, որը տիրում է ոչ միայն տնտեսական, այլև հասարակական ու քաղաքական ոլորտներում: Այն կարծիքը, որ հարուստների խավի ձեւավորումը կարող է նպաստել միջին խավի ձեւավորմանը, ընդամենը վերջին տարիներին արեւմտյան տնտեսագիտության որոշակի ուղղությունների դրույթները սերտած մի քանի տնտեսագետների կաստայական առասպելն է, իսկ իրականությունը ցույց է տալիս, որ հարուստների խավի էլ ավելի հարստացումը նպաստում է ոչ թե իրենց շուրջ միջին խավի ձեւավորմանը, այլ հիմնականում կուտակման հնարավորություններից զուրկ գոյատեւողների խավի ձեւավորմանը: Միջին խավը պետք է ունենա ձեւավորման ու զարգացման ինքուրույն պայմաններ, ինչի հնարավորությունը Հայաստանում այսօր բացառվում է ոլորտների գերմոնոպոլիզացման ձգտող հարուստների խավի կողմից:

Հայաստանում աղքատությունը այսօր դադարել է զուտ սոցիալական բնույթի պրոբլեմ լինելուց եւ աճել ու խորացել է այն աստիճան, որ վտանգի է ենթարկել հասարակության վերարտադրության գործընթացները, ինչպես ժողովրդագրական տեսանկյունից, այնպես էլ՝ հասարակական-քաղաքական եւ կրթամշակութային ու արժեքային: Այն աստիճան է անկում ապրել մարդկանց առաջնային կարելորության պահանջումների բավարարման կարողությունները, որ հանուն ֆիզիկական գոյատեւման նվազագույնի, մարդիկ պատրաստ են զիջել ոչ նյութական հարթության վրա գտնվող արժեքներն ու պահանջումները: Սա հուշում է, որ ժամանակն է անհանգստանալու եւ մտածելու, որ աղքատության ծայրահեղ դրսեւորումները, այնպիսի մի հասարակության մեջ ինչպիսին հայաստանյանն է, վտանգավոր հետեւանքներ կարող է ունենալ ընդհանրապես ազգային անվտանգության վրա, քանի որ անվտանգության կարելոր գործոններից է ոչ միայն բանակը, այլև առաջին հերթին այդ երկրի եւ այնտեղ ապրող ժողովրդի զարգացման տեմպերը եւ առկա մերուժը:

Աղքատության հիմնախնդիրը Հայաստանում ենթարկվել է մի շարք հետազոտությունների: Սակայն մինչեւ այժմ իրականացված հետազոտություններում հիմնականում փորձ է արված վերլուծել այս երեւոյթի քանակական դրսեւորման տեսանկյունները, ինչը հանգեցրել է այն հետեւու-

թյան, որ աղքատությունը պայմանավորված է հիմնականում տնտեսական պատճառներով, եւ դրա նվազեցման կամ հաղթահարման հնարավոր ուղիները նույնպես գտնվում են տնտեսական ոլորտում: Ինչ վերաբերում է աղքատության հասարակական եւ քաղաքական պատճառների վերլուծությանը, ապա այս տեսանկյունները մինչ այժմ դուրս են մնացել երեւոյթի ուսումնասիրությանը զբաղվողների ուշադրությունից:

Ներկայացվող աշխատության մեջ նախ փորձ է արվելու վերլուծության ենթարկել աղքատության ձեւավորման պատճառները՝ բնորոշելով այն ինչպես սոցիալական երեւոյթ, այնպես էլ հասարակական-քաղաքական, վեր հանելու դրա վտանգավոր դրսեւորումները հատկապես կրթական ոլորտում, որն ուղղակիորեն կապված է երկրի հեռանկարային անվտանգության հետ, եւ վերջապես կվերլուծվեն նաեւ աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականության համար անհրաժեշտ սկզբունքային մոտեցումները:

## 1. Աղքատության պատճառները, բնույթը եւ առանձնահատկությունները Հայաստանում

Խորհրդային համակարգի փլուզումից եւ Հայաստանի անկախացումից հետո, ինչպես արդեն նշվեց, առաջնային խնդիրը նոր տնտեսական, քաղաքական եւ հասարակական ինստիտուտների վրա հենված պետական համակարգի ձեւավորումն էր, որը Հայաստանում, կարելի է ասել, դեռեւս չի ավարտվել: Անկախության ձեռք բերմանը հաջորդած այս փուլի, որն ընդունված է անվանել «անցումային շրջան», իշխանությունների կողմից հռչակված նպատակը Հայաստանում քաղաքական տեսանկյունից՝ ժողովրդավարական համակարգի, տնտեսական տեսանկյունից՝ ազատ շուկայական հարաբերությունների եւ հասարակական տեսանկյունից՝ քաղաքացիական հասարակության ձեւավորումն էր: Ինչպես վերն արդեն նկատել ենք, միջազգային փորձը հուշում է, որ նոր համակարգի այս երեք հիմնասյուները չեն կարող գործել միմյանցից անջատ, եւ նրանցից յուրաքանչյուրի կայացածության աստիճանը փոխապայմանավորում են մյուս երկուսը: Հետեւաբար պետք է կարծել, որ ազատ շուկայական հարաբերությունների ձեւավորումը չէր կարող համարվել առաջնային ժողովրդավարության եւ քաղաքացիական հասարակության ձեւավորման համեմատ կամ տնտեսական համակարգի բարեփոխումները առաջնային չէին հասարակական ու քաղաքական համակարգի բարեփոխումներից: Միչնդեռ անցած տասնամյակի մեր ուղին ցույց է տալիս, որ Հայաստանի կառավարող վերնախավը, որն արդեն 1991 թվականին իշխանությունը իր ձեռքը վերցնելուց հետո որդեգրել էր ժողովրդին վճիռների ու որոշումների կայացումից աստիճանական օտարման քաղաքականություն, առաջնային կարեւորության խնդիր համարեց տնտեսական խնդիրները՝ դրան ածանցելով քաղաքականը եւ հատկապես հասարակականը: 1991 թվականից ի վեր Հայաստանում ստեղծվել է հասարակագիտական տեսանկյունից կառավարման տգիտության մի փուլ, երբ հասարակական հարաբերությունները դիտվում են ստորադաս տնտեսականի եւ քաղաքականի նկատմամբ, այն դեպքում, երբ թե տնտեսական եւ թե քաղաքական հարաբերությունները ածանցվել են հասարակական հարաբերություններից եւ դրանց հիմքում ընկած են հասարակական հարաբերու-

թյունները կարգավորող օրենքները: Հետեւաբար հնից նոր համակարգին անցման առանցքային խնդիրը հասարակական նոր հարաբերությունների եւ դրա վրա հենված համակարգի ձեւավորումը պետք է լինէր, որտեղ հասարակական համակարգի բարեփոխումներին զուգահեռ, պետք է իրականացվէին տնտեսական եւ քաղաքական համակարգերի բարեփոխումները: Ըստ էության, քաղաքական համակարգի բարեփոխումը, որպես հասարակության ինքնակազմակերպման եւ կառավարման առանցքային օղակ, անցումային շրջանի առաջնահերթություններում պետք է գերակայեր տնտեսականին: Այս սկզբունքի պահպանումը կարելու էր նրանով, որ տնտեսական հարաբերությունները, որոնք առանց հասարակական եւ քաղաքական հարաբերությունների ներդաշնակման հակված էին անիշխանության եւ կոպիտ ուժային մրցակցության ձեւավորման, կարող էին եւ, ըստ էության, ձախողեցին Հայաստանում անցումային շրջանը առանց ցնցումների իրականացնելու գործընթացը եւ երկիրը ներկայումս գտնվում է ոչ թե անցումային շրջանի այս կամ այն փուլում, այլ պարզապես հայտնվել է խոր համակարգային ճգնաժամում, որտեղ օրենքից վեր գործող ֆինանսական օլիգարխները, հասնելով ուժային ու ազդեցության ոլորտների վերահսկողության, փորձում են իրենց ֆինանսական շահերին հարմարեցնել երկրի քաղաքական եւ հասարակական գործընթացները:

Սոցիալական բազայի տեսանկյունից Հայաստանը դեռեւս 1991 թվականին ուներ բավականին նպաստավոր պայմաններ անցումային շրջանը առանց խոր ցնցումների անցնելու: Անցման շրջանի հաջողությունը կարող էր պայմանավորել այնպիսի հասարակական համակարգի ձեւավորման ռազմավարության որդեգրումը, որի ստրատիֆիկացիոն կառուցվածքում առաջնային նշանակություն է տրվում միջին խավի ձեւավորմանն ու վերարտադրությանը: Խոսքը վերաբերում է հասարակական հարաբերություններում ինքնուրույն գործառնությանը դեր կրող միջին խավի ձեւավորմանը, որի ակտիվությունը ժողովրդավարության, ազատ շուկայի եւ քաղաքացիական հասարակության ձեւավորման հիմնարար պայմանն է: Հայաստանի բնակչությունը խորհրդային պետության փլուզման շրջանում ունեցվածքային կարողությունների տեսանկյունից ուներ միջին խավի հատկանիշներ: Սա արդեն կարելու էր գործոնի դեր կարող էր ստանալ, որպեսզի իշխանությունը իր առաջնային խնդիրը համարեր առկա

հնարավորությունների սահմաններում միջին խավի պոտենցիալ ունեցող բնակչության վերարտադրության եւ ակտիվության դրսեւորման նպաստավոր պայմանների ձեւավորումը: Սա այն հիմնական ուղին էր, որը թույլ կտար պահպանել հասարակական ակտիվությունը, այդ թվում նաեւ տնտեսական ոլորտում: Սակայն, Հայաստանի անցած տարիների վերլուծությունը ցույց է տալիս, որ իշխող վերնախավը որդեգրեց առկա մարդկային, տնտեսական եւ ունեցվածքային ռեսուրսների վերարտադրության բոլորովին այլ քաղաքականություն:

Հասարակական հարաբերությունների եւ նոր համակարգի ձեւավորումը մատնելով լիարժեք անտարբերության, հիմնական կարելությունը տրվեց տնտեսական ոլորտում սահմանափակ թվաքանակի սուբյեկտների ձեռքում կապիտալի խոշոր կուտակումների տանող քաղաքականությանը: Այն կարգախոսը, որը շրջանառության մեջ դրվեց ազատականության վուլգարիզացման հայաստանյան «հայրերի» կողմից, հիմնականում ուներ հետեւյալ բովանդակությունը. Հայաստանում անհրաժեշտ է ամեն գնով հասնել հարուստների խավի ձեւավորմանը, որը կարելու է, թե ինչ ճանապարհով կուտակած կապիտալը կներդնի տնտեսության մեջ եւ, ստեղծելով նոր աշխատատեղեր, կապահովի գործազուրկ դարձած բնակչությանը աշխատանքով: Խորհրդային ստանդարտիզացված տնտեսագիտական «մտքի» կապիտալիստական տնտեսավարման մասին այս պրիմիտիվ ֆանտազիան բնականաբար համապատասխանում էր «էգ կովերի» եւ այլ նմանատիպ արտառոց գիտելիքների շրջանակներին, սակայն Հայաստանի հեռանկարի տեսանկյունից, այն հանգեցրեց սոսկալի սոցիալական ու քաղաքական հետեւանքների:

Բնական է, որ Հայաստանում մի խումբ հարուստների դասի ձեւավորման քաղաքականությունը չէր կարող ընթանալ այլ երկրի հաշվին, մանավանդ նկատի ունենանք, որ Հայաստանն այդ շրջանում արդեն գտնվում էր շրջափակման մեջ: Հետեւաբար, մի խումբ հարուստների ձեւավորումը անխուսափելիորեն պետք է իրականացվեր Հայաստանի Հանրապետության ներքին ռեսուրսների հաշվին: Որպես այդպիսիք կարող էին լինել բնակչության անձնական սեփականության ու ունեցվածքային միջոցները եւ հանրային-պետական սեփականությունը: Որպեսզի ապագա մի խումբ հարուստները չհանդիպեն մրցակցության ժողովրդի կարող եւ ընդունակ շրջանակներից դուրս եկած անհատների կողմից, հարուստների ձեւա-

վորման առաջին փուլում իրականացվեց ժողովրդի աղքատացում՝ անձնական ունեցվածքի ունեզրկման եւ դրան ուղղված պետական քաղաքականության կիրառման միջոցով: Այս միջոցառումը շատ կարեւոր էր այն առումով, որ լուծում էր միանգամից երկու հարց. նախ՝ հարստամալու իրենց ճանապարհին պետական-հանրային սեփականության բաշխման ու վերաբաշխման գործընթացներում ապագա հարուստների դասին ազատում էր պոտենցիալ անցանկալի մրցակիցներից, որոնք կարող էին լինել ժողովրդի միջից դուրս եկած այնպիսի պատահական մարդիկ, ովքեր չէին պատկանում իշխանություն ունեցողների շրջապատին եւ երկրորդ՝ ապահովում էր իշխանություն ունեցող ապագա հարուստների նախնական կապիտալի կուտակման առաջին փայաբաժնի ձեւավորումը՝ հասարակությանը մասսայական աղքատացման ենթարկելու հաշվին:

Այս փուլում հասարակության աղքատացումը եւ ապագա հարուստների հարստացումն ընթացավ զուգահեռաբար քաղաքական եւ տնտեսական ոլորտներում ձեռնարկված մի շարք հիմնական միջոցառումների շնորհիվ:

Այսինքն՝ աղքատության ձեւավորումը Հայաստանում ոչ այնքան պայմանավորված էր այն օբյեկտիվ պատճառներով, որոնք հաճախ նշվում են որպես հիմնական պատճառներ (1988թ. երկրաշարժ, Ղարաբաղյան պատերազմ եւ Հայաստանի շրջափակում), այլ իշխանության կողմից որդեգրված անցումային շրջանի քաղաքականությամբ: Բնական է, որ թե երկրաշարժը, թե պատերազմը եւ թե շրջափակումը ունեցան իրենց բացասական դերը, սակայն առողջ ու բարոյական քաղաքականության որդեգրման դեպքում կարելի էր ոչ միայն խուսափել կառուցվածքային եւ համակարգային աղքատության գիրկն ընկնելուց, այլև հաջողությամբ վերացնել թե աղետի եւ թե պատերազմի հետեւանքները: Այսօր արդեն ի հայտ եկող մի շարք փաստեր՝ կապված եւ էներգետիկ չարաշահումների, եւ այլ ոլորտներում թույլ տրված աններելի սխալների հետ, ցույց են տալիս, որ Հայաստանում աղքատության ձեւավորումը հիմնականում ունի ոչ այնքան տնտեսական, որքան քաղաքական ու հասարակական պատճառներ: Հենց այս պատճառների վրա էլ առավել մանրամասնորեն կանգ կառնենք այս պարագրաֆում, քանի որ առանց այդ պատճառների վերացման, աղքատության դեմ պայքարել՝ կնշանակի ոչ թե հիվանդության բուժում, այլ ժամանակավոր ցավազրկում:

**Աղքատության ձեւավորման քաղաքատնտեսական պատճառները:** Ինչպես վերն արդեն թուցեցիք նշվեց, աղքատության ձեւավորմանը մեծապես նպաստել եւ նպաստում է այն հանգամանքը, որ Հայաստանում բնակչության մեծամասնությունը օտարված է վճիռների ու որոշումների կայացմանը (ուղղակի կամ միջնորդավորված) մասնակցություն ցուցաբերելու հնարավորությունից: Այս երեւոյթի արմատները բավականին խորն են եւ հասնում են մինչեւ 1991 թվականը: Ինչպես հայտնի է, հասարակության համար իշխանության մատչելիության հավասար հնարավորությունների ձեւավորումը կարեւոր պայման է բոլորին երկրի կյանքին եւ գործընթացներին մասնակից դառնալու համար: Իշխանության հասարակական մատչելիության ուղիները հիմնականում երկուսն են՝

- իշխանության ձեւավորմանը մասնակցելու հավասար հնարավորություններ,
- կառավարման գործին մասնակցություն ցուցաբերելու հավասար հնարավորություններ:

Անցած տարիների քաղաքական գնահատումը ցույց է տալիս, որ 1991-1995 թվականներին Հայաստանի ժողովուրդը իշխանության կամքի թելադրանքով զրկված է եղել իշխանության ձեւավորման գործընթացներին մասնակցելու հնարավորությունից, եւ իշխանության ձեւավորման գործընթացները Հայաստանում իրականացվել են մինչեւ Հայաստանի անկախացումը իշխանություն ձեռք բերած ուժերի կողմից: Իշխանության ձեւավորման գործընթացներից հասարակության օտարման առաջին լուրջ քայլը եղավ անկախ պետության ձեւավորումից հետո նոր խորհրդարանի ձեւավորման նախաձեռնության բացակայությունը: Հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության խորհրդարանի ձեւավորումը տեղի էր ունեցել մինչեւ անկախության ձեռք բերումը՝ խորհրդային պետության օրենքներով եւ կազմում: Խնդիրն այն է, որ այդ խորհրդարանի ձեւավորումը տեղի չէր ունեցել պատգամավորության թեկնածուների կողմից անկախ պետականության ձեւավորման խնդիրներին վերաբերող ծրագրային առաջարկների հիմքի վրա: Այսինքն՝ հասարակությունը այդ չէր ասել այն առաջարկվող քաղաքականությանը եւ գերակայություններին, որոնք պետք է ընկնեին անկախ պետականության ձեւավորման հիմքում: Փաստ է, որ ժողովուրդը այս կոպիտ բացթողման միջոցով միանգամից հայտնվեց խաղից դուրս վիճակում: Այս քայլով օտարման վիճակում հայտնվեց ոչ միայն ժողովուրդը, այլև առկա քաղաքական ուժերը: Արդեն 1991 թվա-

կանին Հայաստանում ձեւավորվել եւ գործում էին շուրջ 6 քաղաքական կուսակցություններ, որոնց ներգրավման միջոցով իշխանության ձեւավորումը կնպաստեր քաղաքական հարթությունում ժողովրդավարական համակարգի հիմքերի ձեւավորմանը: Սակայն քաղաքական ուժերը նույնպես օտարված մնացին երկրում իշխանություն ձեւավորելուն մասնակցելու հնարավորությունից, ինչը հետագայում նպաստավոր հող ստեղծեց իշխանությունը մեկ քաղաքական ուժի կողմից մոնոպոլիզացնելու համար:

Դա արվեց ժամանակի իշխանությունների միտումնավորությամբ, թե՞ անփորձության հետեւանքով, այլ հարց է, որի լուսաբանումն այս աշխատանքի խնդիրներից դուրս է, սակայն քաղաքական որոշումներից եւ գործընթացներից հասարակության օտարումը հանգեցրեց նրան, որ ժողովուրդը եւ մնացած քաղաքական ուժերը զրկվեցին պետության առաջընթացին ու հեռանկարին վերաբերող որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորություններից: Իշխանությունը սկսեց գործել ոչ թե հասարակության եւ նրա կազմակերպված օղակներից եկող պատվերի հիմքի վրա, այլ իշխանության միանձնյա մատչելիությամբ օժտված մարդկանց նեղ շրջանակների ցանկությունների, պատկերացումների եւ շահերի հիման վրա: Տեղի ունեցավ առաջին լուրջ խզումը պետական ինստիտուտների եւ հասարակության միջեւ: Պետական ինստիտուտները սկսեցին գործել հասարակությանն ու քաղաքական ուժերին պետությունից օտարելու քաղաքականությամբ:

Քաղաքական ուժերի օտարումը պետությունից հանգեցրեց նրան, որ մի կողմից՝ իշխանությունը սկսեց կլայնացվել, իսկ մյուս կողմից՝ խմբակայնացման գործընթացները սկսեցին ընթանալ նաեւ քաղաքական ուժերի մեջ: Քաղաքական ուժերը խմբիշխանական իշխանությանը ընդդիմանալու ճանապարհին, սկսեցին ձեռք բերել այն նույն որակները, ինչ բնորոշ էր իշխանությանը եւ հատկապես 1999 թվականից ի վեր խմբակայնացված քաղաքական ուժերը նույնպես սկսեցին գործել այս կամ այն նեղ շրջանակների մասնավոր շահերի հարթությունում՝ կորցնելով քաղաքական ուժի հասարակական գործառույթն ու օտարվելով հասարակությունից:

Քաղաքական դաշտում տեղի ունեցած այս գործընթացները բնականաբար նպաստեցին նաեւ երկրում հասարակական պատվերի եւ հետադարձ կապի սկզբունքի վրա գործող կառավարման համակարգի ձեւա-

վորմանը, ինչի հիմքերը հաջողվեց դնել սոցիալիստական նախկին ճամբարի արեւելակերպական եւ մերձբալթյան մի շարք երկրներում:

Այսպիսով, քաղաքական դաշտում հասարակության օտարման վերը նշված քայլերի հետեւանքում, երկրում հնարավոր դարձավ օրենսդրական ու կառավարման ոլորտում գործել հաճախ ոչ միայն հասարակության շահերից չբխող, այլ դրան խիստ հակասող շահերով, որը ազդեց տնտեսական ոլորտում հասարակության ակտիվ գործելու հնարավորությունների եւ սեփականության ու եկամուտների արտադրական/վերարտադրական կարողությունների դրսեւորման վրա:

Դա հատկապես սուր արտահայտվեց մի քանի առանցքային եւ շրջադարձային նշանակության միջոցառումների անցկացման քաղաքականության գերակայություններում: Խոսքը վերաբերում է երկրի ներսում նախաձեռնված սեփականության ու եկամուտների ոլորտների բաշխման ու վերաբաշխման գործընթացներին: Փորձենք շատ համառոտ ներկայացնել, թե ինչ կատարվեց: Նախ, սառեցվեցին բնակչության խնայքանկում ունեցած միջոցները, որը մի կողմից՝ հանգեցրեց բնակչության ֆինանսական մեկնարկային հնարավորությունների կտրուկ նվազեցմանը, մյուս կողմից՝ հնարավորություն տվեց հարստանալու իշխանության մատչելիություն ունեցող նեղ շրջանակներին, քանի որ նրանք ունեին սառեցված ֆինանսական միջոցները անօրինական կարգով կամ օրենքներից արտոնյալ օգտվելու միջոցով շրջանառելու հնարավորություն<sup>1</sup>:

Հաջորդ հարվածը՝ ուղղված բնակչությանը ֆինանսապես կաթվածահարմանը, կատարվեց 1993 թվականին իրականացված դրամափոխությամբ: Դրա հետեւանով բնակչության մեկ անձի ֆինանսական մեկնարկային հնարավորությունները 1994 թվականին սկսված սեփականացման հարման նախօրեին հասցվեց շուրջ 18 ԱՄՆ դոլարի: Խոսքը վերաբերում է դրամափոխության այն մեխանիզմին, որով սահմանափակվում էր ռուբլին դրամով փոխանակելու հնարավորությունները: Փաստենք, որ ռուբլու փոխանակման չափը սահմանափակված էր 50000 ռուբլով, որի դիմաց մեկ անձին տրվում էր 250 դրամ, որը այդ օրերի փոխանակման կուրսով հավասար էր շուրջ 18 ԱՄՆ դոլարի: Հենց 1993 թվականի նոյեմբերին

<sup>1</sup> Ըստ որոշ տվյալների, բնակչության սառեցված միջոցների ընդհանուր կարողությունը գնահատվում է շուրջ 10 մլրդ ԱՄՆ դոլար: Տե՛ս՝ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր» ամփոփ փաստաթղթի նախնական տարբերակում:

դրամափոխությունը եւ 1994 թվականին իրականացված սեփականաշնորհումը ձեւավորեց կառուցվածքային այն աղքատությունը, որը ներկայումս անկախ փորձագիտական դիտարկումներով ընդգրկում է երկրի բնակչության շուրջ 80 %-ը:

Բնակչության անձնական ունեցվածքի ունեզրկմանը նպաստած մյուս գործոնը պետք է համարել էներգետիկ ճգնաժամը, որի հետևանքով շատ մանր ու միջին ձեռներեցներ զրկվեցին արտադրական գործունեություն ծավալելու հնարավորությունից կամ իրենց արտադրական միջոցները տեղափոխեցին այլ երկրներ, հիմնականում Ռուսաստան, կամ դադարեցնելով տնտեսական գործունեությունը, կորցրեցին իրենց արտադրական միջոցներում դրված կապիտալը վերարտադրելու հնարավորությունները, ինչը նպաստեց նրանցից շատերի ունեզրկմանը: Ահա մասնավոր սեփականության ունեզրկվածության մասն վիճակում երկրում նախաձեռնվեց մասնավոր սեփականատերերի դասի ձեւավորումը՝ «վաուչերային» սեփականաշնորհման քաղաքականության ներդրման միջոցով: Որպես քաղաքականություն սեփականաշնորհումը բնական է, որ պետք է ճիշտ համարվեր, քանի որ ազատ շուկայի անբաժան մասը մասնավոր սեփականությունն է եւ սեփականաշնորհումն այն միջոցներից էր, որ պետք է ապահովեր սեփականատերերի դասի ձեւավորումը: Սակայն այդ դասի ձեւավորումը սեփականաշնորհման իրականացման հենց սկզբից արդեն ձախողված էր, քանի որ, ինչպես նշվեց, բնակչության մեծամասնությունը մինչեւ սեփականաշնորհման սկիզբը մի քանի հիմնական միջոցառման շնորհիվ ունեզրկվեց եւ կորցրեց սեփականաշնորհման գործընթացին մասնակցելու ունեցվածքային հիմքը, ինչը նրան դրեց մեկնարկային անհավասար պայմաններում այնպիսի շրջանակների հետ, ովքեր, ինչ-ինչ արտոնյալ հովանավորչությունից օգտվելով, կարողացել էին 1991-1994 թվականներին ոչ միայն չկորցնել իրենց սեփականությունը եւ ունեցվածքը, այլ նաեւ անկարագրելի տեմպերով ու չափերով բազմապատկել, ինչի հնարավորությունը այդ տարիներին Հայաստանում տալիս էր իշխանության ստվերային հովանավորչությունը եւ ստվերային կապերը ազդեցիկ իշխանական շրջանակներում: Միայն թեկուզ այն հանգամանքը, որ 1993 թվականի վերջին՝ նոյեմբեր ամսին, իրականացված դրամափոխության հետևանքով բնակչության մեկնարկային ֆինանսական կարողությունները հավասարվեցին 18 ԱՄՆ դոլարի, նշանակում էր, որ 20000 դրամ նոմինալ արժողության սեփականաշնորհման սերտիֆիկատները

պետք է արագ տեմպերով արժեզրկվեին եւ հայտնվեին նրանց ձեռքում, ում ֆինանսական մեկնարկային կարողությունների ձեւավորման վրա դրամափոխությունը էական ազդեցություն չէր ունեցել: Իսկ դրանց թիվը Հայաստանում խիստ սահմանափակ է, եւ լավագույն դեպքում կազմում էր բնակչության ոչ ավել, քան 3-4%-ը: Դրանք հիմնականում իշխանության ազդեցիկ շրջանակների կամ դրանց հետ մեխանիկական (նկատի ունենք մասնավոր շահերով պայմանավորված կապերը) կապերով կապված անձինք կամ խմբեր էին:

Այսինքն, եթե անփոփեմք վերը ներկայացվածը, կարելի է ասել, որ Հայաստանում աղքատության ձեւավորման հիմնական պատճառը ունի համակարգային բնույթ: Հայաստանում ձեւավորված ներկա պետական համակարգում առկա է սուր խզում իշխանության (այդ թվում նաեւ կառավարման ոլորտի) ու հասարակության միջեւ, որի հետևանքով իշխանությունը եւ կառավարման համակարգը ծառայեցվում է ոչ թե հասարակությանը, այլ իշխանության ազդեցիկ շրջանակներին մասնավոր շահերով կապված նեղ շրջանակներին: Սա հանգեցնում է նրան, որ երկրում ընդունվող օրենքները մի կողմից, իսկ մյուս կողմից՝ կառավարման ոլորտում կայացվող որոշումներն ու վճիռները նպատակամղված են ծառայելու իշխանության մատչելիություն ունեցող խավին, այլ ոչ թե հասարակության լայն զանգվածներին: Նշվածն ուղղակիորեն անդրադառնում է նաեւ տնտեսական գործունեության ոլորտի վրա եւ տնտեսական հարաբերությունների դաշտում այսօր հասարակության մեծամասնությունը զրկված է ինքնուրույն դերակատարության հնարավորությունից: Տնտեսական դաշտում չի գործում ազատ շուկայի հիմնական կանոնը՝ օրենքով երաշխավորված ազատ եւ հավասար մրցակցության հնարավորությունը բոլորի համար: Դրան հակառակ, գործում են մեխանիզմներ ի նպաստ իշխանության ազդեցիկ շրջանակների ու նրանց հետ կապված ստվերային տնտեսավորողների եւ ի վնաս բնակչության մեծամասնության:

Ստեղծված իրավիճակում բնակչության հիմնական մասը զրկված է քաղաքական եւ տնտեսական ոլորտի գործընթացներին մասնակցելու հնարավորությունից եւ հայտնվել է դրանցից օտարված վիճակում: Սա իր հերթին բնակչության մեծամասնությանը դրել է օբյեկտի կարգավիճակում, իսկ սուբյեկտի կարգավիճակը մենաշնորհել նրանց, ովքեր բնորոշվում են իշխանության մեխանիկական մատչելիության հատկանիշով: Նշվածն իր հերթին բնակչությանը լայն առումով բաժանել է երկու դասի՝ իշ-



խանութան մեխանիկական մատչելիությամբ օժտված «արտոնյալների», եւ իշխանությունից ու նրա ինստիտուտներից օտարված «ոչ արտոնյալների» կամ հասարակ ժողովրդի:

Երկրում ձեւավորված համակարգի առանձնահատկությունն այն է, որ իշխանության մեխանիկական մատչելիության վրա հենված «արտոնյալների» դասը անօրինական արտոնություն ունի նաեւ տնտեսական հարաբերություններում: Փաստորեն, իշխանության լծակների մատչելիությունը այսօր տնտեսական դաշտում սուբյեկտի կարգավիճակ ստանալու հիմնական մեխանիզմներից է:

Արտոնյալության մեխանիկական մեխանիզմները քաղաքական եւ տնտեսական հարթության վրա ձեւավորում են այն հիմնական պատճառները, որոնք երկրում պայմանավորում են կառուցվածքային եւ համակարգային աղքատությունը: Դրա հիմքում ընկած է այն, որ այսօր Հայաստանում եկամուտների ու սեփականության շարժընթաց վերարտադրական կարողություններով օժտված են միայն բնակչության «արտոնյալ» խավերը, իսկ նրանց վերարտադրական կարողություններն էլ պայմանավորված են բաշխման ու վերաբաշխման գործընթացներին մասնակցելու մեխանիկական արտոնությամբ, որից բնակչության ոչ արտոնյալ կարգավիճակում հայտնված հիմնական մասը զրկված է:

**Ըստ էության, բնութագրելով Հայաստանում ձեւավորված աղքատությունը, կարելի է ասել, որ այն ծագել է բաշխման ու վերաբաշխման գործընթացներին մասնակցելու եւ այդ ոլորտին վերաբերող վճիռների ու որոշումների կայացման վրա ազդելու մատչելիության բացակայության պայմաններում եւ բնութագրվում է եկամուտների ու սեփականության արտադրության/վերարտադրության կարողությունների ու հնարավորությունների բացակայությամբ:** Իսկ այս ամենի պատճառներն ունեն համակարգային բնույթ եւ պայմանավորված են քաղաքական ու տնտեսական գործընթացներից հասարակության օտարվածության հանգամանքով, որը բացառում է այդ գործընթացներին հասարակության մեծամասնության համար սուբյեկտի կարգավիճակով մասնակցության հնարավորությունը: Նշված պատճառների ձեւավորման մեջ, ինչպես վերն արդեն նշվեց, իր բացասական դերակատարությունը ունեցան իշխանությունները, սակայն սխալ կլինի բոլոր թերությունների պատճառները փնտրել իշխանության համակարգում թույլ տրված թերությունների դաշտում: Վերը նշված բացասական պատճառների ձեւավորման մեջ իր «դերն» ուներ նա-

եւ հասարակությունը: Խնդիրն այն է, որ աղքատության ձեւավորման սկզբնական շրջանում եւ ներկայումս նույնպես հասարակությունը չձեռնարկեց ակտիվության այնպիսի ձեւեր, որոնք մի կողմից՝ կխոչընդոտեին իշխանությունների կողմից իրականացվող կամայականությունների մթնոլորտի ձեւավորմանը, մյուս կողմից՝ ուղղված կլինեին սեփական տնտեսական, սոցիալական, քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների պաշտպանությանը: Սրանում, անշուշտ, կան առանձնահատկություններ, որոնց մի մասը կապված է մի կողմից՝ ժողովրդի մեջ ընդունված ազգային ստերեոտիպերի հետ, մասնավորապես շահի ընկալման ազգային ստերեոտիպերի, եւ մյուս կողմից՝ խորհրդային մարդու խմբակային հոգեբանության ու հասարակական կյանքի կազմակերպման խորհրդային ստերեոտիպերի հետ: Շահի ընկալման ազգային ստերեոտիպերի ու սուլմնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում մեծ տեղ է տրվում խմբակային շահին, որը գերադասվում է համահասարակական կամ հանդուհանուր շահից: Հետաքրքիր է, որ հենց խմբակային շահերի հետ է կապվում նաեւ անձնական շահի ընկալումը<sup>2</sup>: Սա նպաստում է նրան, որ անձի հասարակական ակտիվությունը ներդաշնակվում է ոչ թե համահասարակական ակտիվության ոլորտներին, այլ խմբակայինին: Այս առումով հատկապես մեծ տեղ է տրվում ազգակցական բնույթի խմբակային կապերին եւ դրան առնչվող շահի զգացողությանը<sup>3</sup>: Սա հանգեցնում է նրան, որ հասարակական կառույցը իրենից ներկայացնում է ոչ թե համահասարակական շահերի պաշտպանությանն ուղղված օրգանիզմ, այլ տարբեր՝ հաճախ նույնիսկ հակոտնյա շահեր հետապնդող մեխանիկական խմբերի ամբողջություն: Սրա հետեւանքով հետխորհրդային շրջանի Հայաստանում թույլ են զարգացել եւ զարգանում այնպիսի հասարակական ինստիտուտներ, որոնք կարող են խրախուսել անձի ինքնուրույն տնտեսական ակտիվության զարգացմանը: Վերջինս հասարակության խմբակային համագործակցության դաշտում հակադրվում է շահի խմբակային ընկալման ստերեոտիպերին, ուստի եւ մեծ դժվարությամբ է ինքնահաստատվում հայաստանյան հասարակության մեջ: Դեռեւս գերիշխում է այն միտումը, որ

<sup>2</sup> Ա.Թադևոսյան, «Գոյատեւման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում», Երեւան, 1998, էջ 19-23:

<sup>3</sup> Մ. Գալստյան, «Սոցիալական շարժումության հնարավորությունները Հայաստանում», Երեւան, 2000, էջ 40:

աշխատանքի հնարավորություն է տրվում ոչ թե պրոֆեսիոնալ եւ մասնագիտական որակավորման չափանիշների հաշվառմամբ, այլ «ծանոթ-բարեկամ» սկզբունքով:

Իհարկե, ազգակցական, դրացիական, ընկերական եւ այլ մասնավոր բնույթի ծանոթություններով պայմանավորված խմբակայությունը դեռեւս գերիշխող է մեր հասարակության մեջ, սակայն հարկ է նշել, որ վերջին տարիներին որոշակի աշխուժություն է նկատվում հասարակական եւ քաղաքացիական ինստիտուտների կայացման դաշտում, ինչը, կարելի է ասել, այն առանցքային կարեւորության խնդիրն է, առանց որի աղքատության հաղթահարման խնդիրը անիրականանալի է թվում: Հատկապես շուկայական տնտեսական համակարգի ձեւավորման գործում, անձնական շահի եւ հասարակական շահի ներդաշնակման ընկալում չունեցող անհատի բացակայությունը պարզապես անհնարին է դարձնում տնտեսական ակտիվության համար օրինական դաշտի եւ հավասար մրցակցային պայմանների ձեւավորումը:

Ինչպես նշվեց, աղքատության ձեւավորման եւ ներկայումս դրա գոյության պատճառներից մեկը խորհրդային ամբողջատիրական համակարգից մնացած հանրային այն ստերեոտիպերի պահպանվածությունն է, որոնք խոչընդոտում են անհատի անձնական նախաձեռնության ձգտումը եւ դրսեւորումը: Այն մտայնությունը, որ պետությունը եւ իշխանությունները պետք է առանց անհատի եւ հասարակության վերահսկողության ու միջամտության լինեն բարոյական եւ ազնվորեն կատարեն իրենց պարտքը հանրության առջեւ, թույլ տվեց առանց հասարակական վերահսկողության եւ դիմադրության հասարակությանը օտարել թե իշխանությունից, թե բաշխման/վերաբաշխման եւ սեփականության ու եկամուտների արտադրության/վերարտադրության ոլորտներից: Պետության դերի բացարձականացումը եւ անհատի դերի անտեսմանը նպաստող խորհրդային շրջանի ստերեոտիպերը ուժեղ են նաեւ այսօր՝ հատկապես միջին եւ ավագ տարիքային խմբերում:

Կարելի է ասել, որ աղքատության հայաստանյան առանձնահատկությունները կայանում են դրա համակարգային եւ կառուցվածքային բնույթի մեջ, քանի որ դա, ինչպես նշվեց, ուղղակիորեն կապված է հասարակության քաղաքական ու տնտեսական հարաբերություններում սուբյեկտի կարգավիճակով մասնակցության հնարավորությունների ծայրաստիճան անհավասարության հետ: Աղքատության ձեւավորումը պայմանա-

վորված է հասարակության մեջ խիստ փոքրամասնություն կազմող «արտոնյալ» ու մեծամասնություն կազմող «ոչ արտոնյալ» դասերի ձեւավորմամբ, եւ ըստ էության, աղքատությունը Հայաստանում բնութագրվում է որպես եկամուտների ու սեփականության արտադրության/վերարտադրության անկարողություն:

Ինչ վերաբերում է աղքատության այն բնութագրին, ըստ որի այն սահմանվում է որպես պահանջունքների բավարարման անկարողություն, ապա դա, ըստ էության, աղքատություն երեւոյթի ձեւակերպման մեջ ածանցյալ բնութագրություն է, քանի որ պահանջունքների բավարարման անկարողությունը ծագում է եկամուտների արտադրության ու վերարտադրության անկարողությունից: Հետեւաբար, աղքատության քանակական բնութագիրը, որը համաձայնեցված է պարենային նվազագույն (7194 դրամ) եւ սպառողական նվազագույն (11735) զամբյուղներին, չեն կարող Հայաստանում աղքատության բնութագրման համար եական դեր կատարել, քանի որ դրանք որեւէ կերպ չեն կարող նպաստել աղքատության պատճառների բացահայտմանը եւ վերացմանը<sup>4</sup>: Բացի այդ ակնհայտ է, որ պարենային եւ սպառողական զամբյուղները իրատեսական չեն, եւ դրանք որպես ելակետ աղքատության դեմ պայքարում օգտագործելը, բերելու է նույնքան արհեստական արդյունքների, որքան արհեստական ու շինծու են այդ զամբյուղները:

Հետեւաբար, չնայած պահանջունքների խնդիրն մենք հետագա վերլուծությունում հատուկ կանդրադառնանք, սակայն աղքատության հիմնական տեսանկյունը, որն այս աշխատանքում առանցքային է լինելու, դա համակարգային աղքատության դեմ պայքարի խնդիրներին է վերաբերելու, քանի որ համակարգային աղքատությունը առաջացնում է ոչ միայն բնակչության, այլ նաեւ պետության աղքատացում, որը ազգային անվտանգություն տեսանկյունից աղքատության երեւոյթի դեմ պայքարին հաղորդում է կրկնակի կարեւորություն:

Թե աղքատությունն ինչպես է ազդում պետական, քաղաքական, հասարակական, մշակութային (այդ թվում կրթական), տնտեսական ոլորտների վրա, կխոսվի հաջորդ բաժնում:

<sup>4</sup> Ըստ անկախ փորձագետների հաշվումների, սպառողական նվազագույն զամբյուղի իրական արժեքը Հայաստանում կազմում է 66 ԱՄՆ դոլար: Տես, «Մարդկային զարգացման ազգային զեկույց», Հայաստան, 2001:

## 2. Աղքատության հաղթահարման հասարակական-քաղաքական տեսանկյունները եւ պետականության զարգացման փոխկապվածությունը

Ինչպես արդեն նշվեց, անցած տասնամյակում էականորեն փոխվեց բնակչության տնտեսական եւ մասնագիտական զբաղվածության պատկերը: Բնակչության հիմնական մասը ներգրավվեց մեծամասամբ մանր եւ մասամբ միջին առեւտրի ոլորտ: Ի դեպ որոշիչ էր նաեւ այն, որ մանր եւ միջին առեւտուրը Հայաստանում ունի երկու հիմնական առանձնահատկություն, նախ՝ այն ինքնուրույն չէ եւ հանդիսանում է, ըստ էության, խոշոր բիզնեսի «գործակատարը» եւ երկրորդ՝ այն գլխավորապես դրսից ներմուծվող էժանագին եւ ցածրորակ ապրանքների իրացմամբ է զբաղված, այլ ոչ թե իրագործում է հայրենական արտադրության ապրանքների իրացումը: Վերջինս չափազանց կարելու է, քանի որ այդ դեպքում առեւտուրը վեր է ածվում հասարակության տնտեսական կյանքի կազմակերպման դերակատարների եւ հասարակության միջեւ հարաբերությունների կառուցման կարելու միջոցի: Մի կողմից՝ այն փոխհարաբերությունների որոշակի դաշտ է ստեղծում արտադրական եւ առեւտրական տնտեսական ոլորտներում ներգրավված մարդկանց եւ հաստատությունների, մյուս կողմից՝ արտադրական դերակատարների եւ հասարակության միջեւ: Խնդիրն այն է, որ երբ մարդիկ սպառում են հայրենական արտադրության ապրանքներ, նրանց եւ ապրանքարտադրողների միջեւ ստեղծվում են տնտեսական կապեր առեւտրական դերակատարների միջնորդությամբ: Այս դեպքում առեւտրական հաստատությունները եւ դերակատարները ստանում են հասարակության մեջ ապրանքարտադրողների եւ դրանք սպառողների միջեւ փոխհարաբերություններ ձեւավորող կարելու մի օղակի գործառույթ: Հետաքրքիր է, որ այդ փոխհարաբերությունը, հիմքում ունենալով տնտեսական դրդապատճառներ՝ հենված ապրանքի առաջարկի եւ պահանջարկի սկզբունքի վրա, ձեռք է բերում նաեւ հասարակական ու նույնիսկ մշակութային բնույթ: Մարդիկ վերացականորեն, առանց անձնապես ճանաչելու իրենց հայրենական ապրանք արտադրողներին, նրանց ապրանքի սպառման միջոցով մի տեսակ ընդհանրականության եւ կապի զգացում են ունենում: **Սա առաջացնում է գործընկերու-**

թյան հիմքի վրա հասարակական համերաշխության եւ համագործակցության մթնոլորտ, որում ապրանքարտադրողն ու սպառողը իրենց զգում են փոխադարձ կապերի մեջ մտած համագործակիցներ: Սա չափազանց կարելու խնդիր է նաեւ պետականության հիմքերի ամրապնդման տեսանկյունից, քանի որ տնտեսական դերակատարներն ու հասարակության մյուս մասը, որը հայտնվում է սպառողի կարգավիճակում, չեն օտարանում միմյանցից: Այս պարագայում, ինչպես նշվեց, առեւտրականները հանդիսանում են հասարակական համագործակցության տնտեսական խթանիչների ձեւավորման կարելու հասարակական օղակը: Հայաստանում իրավիճակն ըստ էության այնպիսին է, որ առեւտրականներն առաջմ համերաշխության եւ համագործակցության զգայական դաշտ են ձեւավորում գլխավորապես ոչ այնքան հայրենական արտադրողների, որքան արտասահմանյան՝ հիմնականում թուրքական եւ իրանական, ինչը հասարակությունում գնալով ավելի ու ավելի է ուժեղացնում այս երկու երկրների հետ համագործակցության մղումները: Դաշտային աշխատանքների ժամանակ իրականացված մեր դիտարկումները ցույց են տալիս, որ եթե 1991-1994 թվականներն ընկած ժամանակահատվածում, հասարակությունում որոշակի դժգոհություն կար թուրքական եւ իրանական ապրանքներով շուկան ողողելու փաստի նկատմամբ եւ այդ դժգոհությունը բացատրվում էր նաեւ նրանով, որ շուկայում նվազել են հայկական եւ ռուսական ապրանքները, ապա 1998-2002 թվականներին մեծացել է անտարբերությունը եւ հասարակությունում ավելի է ուժեղացել ընդհանրականության զգացումը Իրանի եւ Թուրքիայի նկատմամբ: Սա ինքնին վատ չէ, որ հասարակությունն իր հարելանների նկատմամբ ձեռք է բերում բարելամանալու տենդենց, սակայն սա շատ վատ է, երբ հասարակությունում դրա ձեւավորման հիմքը կազմում են բացառապես առեւտրա-տնտեսական գործոնները եւ մշակութային, քաղաքական գործոնները համարյա թե բացակայում են: Սա անհանգստացնող է նաեւ նրանով, որ ինչպես նշվեց, նույնը չի կատարվում հայրենական ապրանքարտադրողների ու սպառողների միջեւ, այն պարզ պատճառով, որ հայաստանյան տնտեսությունը բնութոյով արտադրական չէ եւ չի պահանջում մասնագիտական դիֆերենցիացիա եւ բազմազանություն: Ստացվում է այնպես, որ տնտեսության մանր ու միջին առեւտրական բնույթը՝ մի կողմից, մյուս կողմից՝ տնտեսական գործունեության ոլորտների մոնոպոլիզացումը իշխանության

հետ սերտաճած ընդամենը մի քանի տասնյակի հասնող հիմնականում ստվերային գործունեությամբ բնորոշվող տնտեսավարողների կողմից, խոչընդոտում է.

- հասարակության լայն զանգվածներին, որոնք ընդունակ են տնտեսական գործունեություն ծավալելու եւ մանր ու միջին ձեռներեցությամբ զբաղվելու (ոչ այնքան առետրական, որքան արտադրական), չի տրվում օրենքով ամրագրված գործելու նպաստավոր եւ հավասար պայմաններ, ինչի հետեւանքով մարդկանց մեծ մասը օտարված է արտադրատնտեսական հարաբերություններից, եւ ընդհանրապես արտադրատնտեսական հարաբերությունները չափազանց ցածր մակարդակի վրա են,

- տնտեսական աճին սոցիալական ուղղվածության հաղորդմանը: Տնտեսական աճը, որին մեծ կարելություն է տրվում աղքատության հաղթահարման տեսանկյունից, վերը ներկայացված պատճառներով ունի մասնակիցների նեղ եւ փոքրաթիվ տարապատկեր: Տնտեսական աճի ձեւավորման գործում համարյա աննշան է մանր ու միջին արտադրողների մասնակցությունը եւ չափազանց մեծ է խոշոր արտադրողների մասնակցությունը: Սա բնականորեն հասարակությունում առաջացնում է խոր բեւեռացման իրավիճակ, քանի որ հասարակության այն շրջանակները, որոնք զրկված են տնտեսական գործունեության հնարավորությունից, զրկված են նաև տնտեսական աճին մասնակցությունից, և եկամուտների վերընթաց վերարտադրության հնարավորությունից,

- տնտեսական աճի արդյունքում վերաբաշխման գործընթացների կազմակերպմանը: Քանի որ տնտեսական աճի հիմնական մասնակիցները ոչ միայն խոշոր ձեռներեցության սահմանափակ թվով ներկայացուցիչներն են, այլև աչքի են ընկնում ստվերային գործունեությամբ<sup>5</sup>, ապա նրանց տնտեսական գործունեության հիմնական մասը չի արտացոլվում հարկային դաշտում, հետեւաբար ենթակա չէ վերաբաշխման: Այսինքն խոշոր ձեռներեցությունը իր ստվերային բնույթի պատճառով սոցիալական տեսանկյունից էական դեր չի կատարում: Մյուս կողմից էլ, քանի որ վերաբաշխման կազմակերպումը պետական բյուջեի կազմման եւ ծախսման միջոցով դեռևս ունի բազմաթիվ թերություններ<sup>6</sup>, ապա տնտեսական աճը չի կարող ազդել աղքատության նվազեցման եւ հաղթահարման վրա:

<sup>5</sup> Տես՝ «Մարդկային զարգացման ազգային զեկույց՝ ՄՁԱԶ», Հայաստան, 2001, էջ 79:

<sup>6</sup> Տես՝ «ՄՁԱԶ», Հայաստան, 2001, էջ 86:

Ավելին, ա. տնտեսական աճի դերակատարների թիվը սահմանափակված է մի քանի տասնյակ խոշոր հարուստներով, բ. նրանք իրենց գործունեության առյուծի բաժինը չեն ներկայացնում հարկային դաշտ, հետեւաբար եւ դա չի արտացոլվում բյուջեում ու չի ենթարկվում հասարակական վերաբաշխման, գ. բյուջեն սոցիալական ուղղվածություն չունի: Բյուջեն չունի սոցիալական ուղղվածություն եւ դրա վերահսկման, հաշվետվության ու թափանցիկության մեխանիզմներն այն աստիճան անկատար են, որ կարող են թույլ տալ լուրջ չարաշահումներ (օրինական կամ անօրինական կարգով յուրացումների ճանապարհով): Բյուջեն որպես մեխանիզմ, ըստ էության, ձեւականորեն է կատարում կամ, կարելի է ասել, չի կատարում տնտեսական աճի բաշխման ու վերաբաշխման դերակատարության գործառույթը:

Այս պարագայում կարելի է ասել, որ տնտեսական աճն ու աղքատության հաղթահարումը դեռ երկար են լինելու հակասության մեջ եւ տնտեսական աճն ունենալու է հակառակ էֆեկտ, ավելի է խորացնելու հասարակության ներքին բեւեռացումը՝ գլխավորապես նպաստելով քաղաքական եւ տնտեսական դաշտում իրենց գերիշխանությունը հաստատած առկա խմբիշխանիկների գլխավորությամբ արագությամբ էլ ավելի հարստացմանը: Այնպես որ այն տնտեսագետները, որոնք պնդում են թե աղքատության հաղթահարման հիմնական ուղին տնտեսական աճի բարձր տեմպերին հասնելն է, նկատի չեն ունենում մի բան, որ տնտեսական աճը նպատակ չէ, այլ գործիք է, եւ այն ինքնանպատակ չի կարող լինել: Իսկ որպեսզի այն ինքնանպատակ չլինի, ապա ուշադրությունը պետք է սեւեռել ոչ միայն տնտեսական ոլորտի վրա, այլ նաև տնտեսության կառավարման: Այս դեպքում հասկանալի է դառնում, որ տնտեսական աճն իրոք կարելոր գործոն է աղքատության հաղթահարման համար, սակայն այն չի կարող իր նպատակին ծառայել, եթե տնտեսության կառավարման ոլորտում զուգահեռաբար չի իրականացվում մեկ այլ, *տնտեսական աճին մասնակից դերակատարների թվի մեծացման խնդիրը*: Աղքատության հաղթահարման տեսանկյունից Հայաստանի համար սա, թերեւս, ավելի կարելոր խնդիր է: Այսինքն՝ այսօր աղքատության հաղթահարման առաջնային նշանակություն ունեցող խնդիրը գտնվում է տնտեսության կառավարման ոլորտում, եւ այն ուղղակիորեն կապված է տնտեսական հարաբերությունների դաշտից հասարակության մեծամասնության, որպես դե-

րակատարի մասնակցության մատչելիության վերականգնմանը եւ օտարվածության հաղթահարմանը: Այսինքն, **այսօրվա տնտեսական մե-  
նեջմենքի առաջնային խնդիրը հասարակության տնտեսական գործունե-  
ության ակտիվության ձեւավորումն է, այլ ոչ թե ինքնանպատակ տնտե-  
սական աճի ձգտումը:**

Հասարակության մեծամասնության տնտեսական գործունեության խրախուսումը, արտադրական ոլորտում մանր ու միջին ձեռներեցություն-  
նը, երկրի ապագան է ոչ միայն տնտեսական առումով, այլ նաեւ հասարա-  
կական: Այն, որ այսօր շատերի մոտ ձեւավորված կարծիք կա, թե արտա-  
գադքի մեծ ծավալները աղքատության հետեւանքներն են, երեւոյթի թյու-  
րընկալման հետեւանք է: Խնդիրն այն է, որ մարդիկ չեն հեռանում Հայաս-  
տանից, որովհետեւ աղքատ են, այլ հեռանում են այն պատճառով, որով-  
հետեւ չեն կարողանում տնտեսական դաշտում դերակատարություն  
ստանալ: Իսկ դա այն միակ ճանապարհն է, որը թույլ է տալու մարդուն վե-  
րարտադրել իր ունեցվածքը եւ եկամուտները շարժընթացորեն: **Հայաս-  
տանում արտագադքը կկասեցվի այն բնական ճանապարհով միայն, երբ  
մարդիկ կհամոզվեն, որ այստեղ իրենց համար ստեղծվել են տնտեսական  
գործունեություն ծավալելու ոչ միայն նպաստավոր, այլ որ գլխավորն է՝  
օրենքով եւ դրա գործադրման միջոցով ամրագրված հավասար պայման-  
ներ ու հնարավորություններ:** Այսօր միանշանակ է, որ Հայաստանում տն-  
տեսական օրենքները չեն նպաստում մանր ու միջին ձեռներեցության  
զարգացմանը: Դրանք հիմնականում ուղղված են խոշոր ու ստվերային  
ձեռներեցների շահերին, որը թույլ է տալիս վերջիններիս՝ հեշտությամբ  
դուրս մղել մանր ու միջին ձեռներեցներին տնտեսական գործունեության  
ոլորտներից:

Ինչպես նշվեց, զանգվածային տեսանկյունից Հայաստանում մարդ-  
կանց տնտեսական գործունեությունը հիմնական արտադրական բնույթի  
չէ եւ գերադասորեն մանր առեւտրական բնույթ ունի: Նշվեց նաեւ, որ սա  
առանձնակի մասնագիտական հմտություններ չպահանջող ոլորտ է:  
Ստեղծված այս իրավիճակը, որն անշուշտ 1990-ականների առաջին կե-  
սին տարված տնտեսական քաղաքականության բազմաթիվ բացասական  
հետեւանքներից մեկն է, աղքատության պատճառ է դարձել ոչ միայն ու-  
նեցվածքային տեսանկյունից: Նկատենք, որ մանր առեւտրի ոլորտ ներգ-  
րավվածներին միայն հարաբերականորեն կարելի է աղքատ չանվանել:

Նրանց մեծ մասը, իր աշխատուժի գերշահագործման միջոցով, կարողա-  
նում է բավարարել հիմնականում գոյատեւման անհրաժեշտ սահմանը:  
Այսինքն, հիմնականում նա գոյատեւման միջին շրջանակներում կարողա-  
նում է բավարարել կենսապահովման՝ սննդի, հագուստի ու բնակարանի  
ջեռուցման առաջնային պահանջումները: Ավելի բարձր որակի պա-  
հանջումների բավարարումն այս խավի համար հիմնականում անբա-  
վարար մատչելիություն ունի: Այս խավը գլխավորապես կարողանում է  
ապահովել ունեցվածքի պարզ վերարտադրություն, բայց ոչ վերընթաց,  
որն արդեն միջին խավին բնորոշ հատկանիշ է: Այսինքն՝ այս խավին չի  
կարելի անվանել միջին խավ:

Հասարակական կյանքում փոխանակային գործընթացներին մասնակ-  
ցության տեսանկյունից, այն ունի թույլ դերակատարություն միայն ապ-  
րանքների փոխանակության ոլորտում: Նկատենք, որ խոսքը վերաբերում է  
էժանագին եւ ցածրորակ ապրանքներին: Իսկ թանկարժեք եւ բարձր-  
րակ ապրանքների շրջանառությունը իրականացնում են միայն խոշոր  
առեւտրով զբաղվող եւ ունեցվածքային տեսանկյունից հարուստ խավին  
պատկանողները: Խոշոր առեւտուրը արդեն ստվերային հովանավորչա-  
կան ոլորտի առեւտուրն է, որը Հայաստանում անհնար է առանց իշխա-  
նության ազդեցիկ շրջանակների հովանավորչության: Խնդիրն այն է, որ  
բնակչության մեծամասնության ներգրավվածությունը մանր եկամուտներ  
ապահովող զբաղվածության ոլորտներ, որոնք չեն պահանջում մասնա-  
գիտական առանձնահատուկ որակներ, ոչ միայն աղքատության կամ գո-  
յատեւման վիճակ ձեւավորող պատճառ է, այլև աղքատացումն է հասա-  
րակական հարաբերությունների դաշտը եւ ձեւավորում հասարակական  
անտագոնիզմ: Հասարակական կյանքում պահանջումների բավարար-  
ման խիստ ցածր մակարդակը, որն ինչպես նշվեց, բնակչության մեծա-  
մասնության մոտ սահմանափակվում է առաջնային երեք պահանջումնե-  
րի բավարարման ոչ լիարժեք կարողություններով, հիմք է հանդիսա-  
նում պահանջումների բավարարման տեսանկյունից միմյանցից  
օտարված հասարակական խավերի ձեւավորմանը, որոնք մեկը մյուսից  
ոչ միայն օտարացած են, այլ նաեւ թշնամացած: Դրա հիմնական պատ-  
ճառն այն զգացողությունն ու կարծիքն է, որ հասարակական այն խումբը,  
որն ունի պահանջումների բավարարման ավելի բարձր կարողություն,  
ձեռք է բերել մյուսների գործունեության հնարավորությունների սահմա-

նափակման միջոցով: Հասարակական տարածված կարծիքի համաձայն, այն մարդիկ, ովքեր այսօր ունեն պահանջմունքների բավարարման բարձր կարողություններ, մեծամասամբ կոմպետենտ չեն դրա համար, կամ, ժողովրդական լեզվով ասած, արժանի չեն, քանի որ սեփական ունակություններով չեն դրան հասել: Ըստ այդ կարծիքի, հարստացել են ոչ այն մարդիկ, ովքեր տնտեսական հմտություններ ու կարողություններ ունեին, այլ մարդիկ, ովքեր բարոյական ցածր հատկանիշների դրսևորման միջոցով կարողացել եւ կարողանում են պետական իշխանությունը գործադրելու հաշվին շահագործել ներքին մարդկային եւ հանրային (պետական) ռեսուրսները: Հանրային ռեսուրսների տակ մարդիկ հասկանում են եւ վարչական ռեսուրսները, եւ ԽՍՀՄ ժամանակներից մնացած հսկայական արտադրական հանրային միջոցները, եւ արտաքին ու ներքին քաղաքական ռեսուրսները, եւ բնական ռեսուրսները (մասնավորապես անտառային, ջրային եւ հանքային ռեսուրսների առումով), որոնք արտոնյալ շահագործման կարգով եկամուտների աղբյուր են դարձել ժողովրդի մեջ այսօր հոլովվող շատ ազդեցիկ անունների համար: Ըստ էության, խոշոր հարուստների, որոնք Հայաստանում հիմնականում իշխանությանը միաձուլված ձեռներեցներն են, վարկը հասարակությունում խիստ ցածր է, որովհետեւ նրանց մեծ մասը չի զբաղված հասարակայնորեն օգտակար ապրանքի արտադրությամբ: Հայրենական արտադրողների հիմնական առաջարկը ներքին շուկայում սահմանափակվում է ծխախոտով, գարեջրով, ալկոհոլային խմիչքներով եւ մասնակիորեն ոչ բարձր որակով աչքի ընկնող սննդամթերքով: Հետաքրքիր է, որ որակյալ սննդամթերք արտադրողների հանդեպ կա ընդգծված դրական հասարակական կարծիք, որն արտահայտվում է այդ ճանապարհով հարստացողների նկատմամբ «հալալ է» բանաձեւում: Սակայն, մնացածի նկատմամբ վերաբերմունքը կամ բացասական է, կամ անտարբեր, կամ լավագույն դեպքում՝ հասարակության ոչ լայն շրջանակներում թույլ արտահայտված դրական վերաբերմունք: Հարկ է նկատել, որ հասարակության մեջ այս կամ այն խոշոր ձեռներեցի նկատմամբ խիստ բացասական վերաբերմունք է ձեւավորվում, եթե հայտնի է դառնում, որ նրա քիզնեսը անօրինական կարգով հովանավորում է իշխանության այս կամ այն ներկայացուցիչը: Հակառակը, այսօր գնալով ավելի է բարձրանում այնպիսի խոշոր ձեռներեցների վարկը, որոնք կապիտալի վերարտադրության մեջ հիմնականում յուրացման

ձեւը փոխարինել են արտադրատնտեսականով: Այսինքն՝ նման գործունեությունը համարվում է «արդար»: Եթե փորձենք այս տրամադրությունները հասարակագիտական վերլուծության ենթարկել, ապա կարելի է ասել, հասարակությունը առավել ընդունելի է համարում տնտեսական գործունեության այն ձեւը, որը չի իրագործվում հասարակության եւ երկրի (եթե նկատի ունենանք, որ պետությունը պատկանում է հասարակությանը, այլ ոչ թե այդ պահին իշխանությունը կրողներին) քաղաքական-հասարակական, վարչական, օրենսդրական, բնական, մարդկային, արտադրատնտեսական ռեսուրսների յուրացման ու շահագործման ճանապարհով: **Այսինքն, կարելի է ասել, որ հասարակությունում դատապարտելի են ոչ այնքան ինքնին աղքատության դրդապատճառները, այլ՝ համակարգային: Համակարգային աղքատությունն է ծնում ինքնին աղքատությունը:** Հայաստանում ձեւավորված իրավիճակը այնպիսին չէ, որ մարդկանց համակարգի կողմից տրված են գործելու ու իրենց սեփականությունն ու եկամուտները վերարտադրելու հավասար պայմաններ ու հնարավորություններ, իսկ հասարակությունում առկա է աղքատություն: Եթե համակարգը մարդկանց պարտադրած չլիներ գործունեության հավասար պայմանների անմատչելիությունը, աղքատությունն այդքան էլ անհաղթահարելի ու վտանգավոր երեւոյթ չէր դիտվի:

Աղքատության այս իրավիճակը հարուցում է հասարակության դժգոհությունները առաջին հերթին այն առումով, որ ձեւավորում է.

- նյութական կարողությունների եւ մասնագիտական, կրթական ու մարդկային այլ կարողությունների միջեւ անհամապատասխանություն,
- մարդկային ունակությունների ու կարողությունների եւ հասարակության մեջ պրեստիժային կարգավիճակի ձեւավորման միջեւ անհամապատասխանություն,
- մարդկային ունակությունների ու կարողությունների եւ սոցիալական շարժունության հնարավորությունների անհամապատասխանություն,
- մարդկային կարողությունների եւ հասարակական-պետական կյանքին մասնակցություն ունենալու հնարավորությունների անհամապատասխանելիություն,
- հասարակական հարաբերություններում ազատ մրցակցային եւ համագործակցային ձեւերի նկատմամբ ենթակայական եւ կոնֆլիկտային ձեւերի գերակայություն,

- հասարակական փոխանակային հարաբերություններին ըստ ունակությունների տիրապետման աստիճանի մասնակցության հնարավորությունների խեղաթյուրում եւ փոխանակային հարաբերությունների տարապատկերի աղքատացում: Հասարակության հատկապես աղքատ եւ գոյատեւման կարողությունների ոչ բարձր մակարդակ ունեցողների փոխանակային հարաբերություններին մասնակցության հնարավորությունների սահմանափակում,

- հանրային զարգացման եւ վերարտադրության գործընթացներին բնակչության կարող զանգվածների մասնակցության եւ դրա հնարավորությունների խիստ սահմանափակում:

Նյութական կարողությունների եւ մասնագիտական, կրթական ու մարդկային այլ կարողությունների միջեւ անհամապատասխանելիության երեւույթը Հայաստանում ի հայտ եկավ արդեն 1990-ական թվականների սկզբներին, եւ առաջին տարիներին այն ուներ ավելի սուր արտահայտված բնույթ: Մասնագիտական կարողությունների իրացման ճանապարհով նյութական կարողությունների, եկամտի եւ սեփականության կայուն վերարտադրության անհնարիությունը շատերին ստիպեց դիմել զբաղվածության ոլորտի փոփոխման: Կարելի է ասել, որ երեւութի ձեւավորումն ուներ օբյեկտիվ հիմքեր, որը պայմանավորված է Հայաստանի հասարակական-քաղաքական եւ տնտեսական համակարգի վերափոխման հրամայականով: Սակայն, այն կարելի էր ավելի մեղմ տանել եւ օգտագործել առկա մարդկային ռեսուրսների ունակությունները, եթե տնտեսության վերափոխման եւ վերապրոֆիլավորման քաղաքականությունը իրականացվեր երկրի մարդկային ռեսուրսներում առկա ունակությունների գործոնի հաշվառման հիմքի վրա: Ստացվեց այնպես, որ մարդկային ռեսուրսների հաշվառման լիակատար անտեսման պայմաններում Հայաստանում շատ որակյալ ունակություններ ունեցողներ, որոնց կարողությունները ունեին նաեւ պահանջարկ այլ երկրների շուկաներում, արտագաղթեցին Հայաստանում սեփական կարողությունների իրացման հնարավորությունների բացառման պատճառով: Ներկայումս, այս տեմպերը շարունակում է եւ Հայաստանի տնտեսական քաղաքականությունը, որում պետությունը նույնպես ունի իր դերակատարության հնարավորությունները, շարունակվում է իրականացվել մարդկային ներքին ռեսուրսների մասնագիտական եւ կրթական ունակությունների ու կարողություն-

ների անտեսման պայմաններում: Սա ունենում է երկու հիմնական հետեւանք.

- նախ՝ որակյալ կարողություններ ունեցող մարդիկ չեն ունենում վերապատրաստման խթանիչներ եւ հեռանում են Հայաստանից,

- կամ մնալով Հայաստանում, չեն իրացնում իրենց ունակությունները համապատասխան ոլորտներում, կամ ընդհանրապես:

Սա է պատճառը, որ Հայաստանում առկա է բարձրագույն եւ մասնագիտական կրթություն ունեցող անհատների, հատկապես միջին տարիքային խմբերում, զգալի աղքատություն: Մյուս կողմից, սա բացասաբար է անդրադառնում պետության զարգացման խնդիրներին: Չեն իրացվում այն մարդկային ռեսուրսների հնարավորությունները, որոնք կարող են նպաստել երկրի տնտեսական զարգացմանը եւ աղքատության հաղթահարմանը: Ստեղծված իրողության հետեւանքով ձեւավորվել է այնպիսի մի իրավիճակ, երբ երկրում եկամտների արտադրության եւ վերարտադրության հնարավորության երաշխիք չեն ստեղծում մասնագիտական եւ կրթական ունակությունները: Հետեւաբար, այդ ունակությունների նկատմամբ ձգտումը սերնդափոխության գործընթացում նվազում է, եւ Հայաստանը չի կարողանում ապահովել իր մարդկային ռեսուրսների որակական հատկանիշները: Մասնագիտական եւ կրթական կարողությունների հիման վրա նյութական կարողությունները զարգացնելու հնարավորությունների անհամապատասխանելիությունը իջեցրել է նաեւ կրթական համակարգի նկատմամբ որակյալ կրթության պահանջարկը, ինչը զգալիորեն զցել է մեր ԲՈՒՀ-ական համակարգի ուսուցման որակը: Պետական եւ մասնավոր ԲՈՒՀ-երի դասախոսական աշխատանքը, չհամարվելով միջին եկամտաբեր աշխատանք, չի հրապուրում որակապես բարձր մտավոր ներուժին, հատկապես երիտասարդ գիտնականներին: Արդյունքում դասախոսական կազմը շարունակում է մնալ խորհրդային շրջանի միջինից բարձր եւ արդեն զառամյալ տարիքի կոնտինգենտը, որի միջեւ մրցակցությունը դասախոսական տեղերում մնալու համար, պայմանավորվում է հիմնականում կաշառակերության հաշվին եկամտներ ստանլու հանգամանքով:

Ստեղծված իրավիճակի հետեւանքով զգալիորեն ընկնում է նաեւ համալսարանական կրթության որակը եւ Հայաստանում որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները տարեցտարի սահմանափակվում

են, ինչն էլ առաջացնում է հոսք արտասահման՝ նույնիսկ ուսանողական տարիքի երիտասարդության շրջանում, որոնք հիմնականում ուսումը ստանալուց հետո հետ չեն վերադառնում: Նման պայմաններում վարչարարական մեթոդների կիրառումը ոչինչ չի տա<sup>7</sup>: Ելքը կրթական համակարգի որակի պահպանմանն ուղղված միջոցառումների եւ դրա պատճառը հանդիսացող որակյալ մասնագիտական ներուժի կարողությունների իրացման պայմանների (այդ թվում նաեւ վարձատրության տեսանկյունից) ձեւավորման մեջ է:

Հարկ է նկատել, որ Հայաստանում ոչ թե չկա մասնագիտական որակյալ մարդկային ներուժ, ինչպես փորձում են դա հաստատել մի շարք բարձրաստիճան իշխանավորներ ու անսկզբունքային մտավորականներ, այլ բացակայում են այդ ներուժի իրացման պայմանները, ինչի հետեւանքով մարդիկ կան հեռանում են Հայաստանից, կամ ստորացուցիչ վարձատրության առաջարկների պատճառով ընդհանրապես չաշխատելը կամ ինքնազբաղվածությունը գերադասում են չափից դուրս էժան վարձատրությունից: **Որակյալ մարդկային ներուժի պահանջարկ ձեւավորող շուկայի ձեւավորումը պետք է դիտել որպես ռազմավարական նշանակության խնդիր, որը կարող է եւ նպաստել աղքատության հաղթահարմանը, եւ կանխել որակյալ ներուժի արտահոսքը, եւ ձեւավորել կրթական համակարգի որակի բարձրացման հասարակական պահանջարկ, ինչը կարծում ենք, միակ միջոցն է մեր կրթական համակարգը զառամյալ ու կաշառակեր դասախոսական կազմից ազատելու եւ մասնագիտական ժամանակակից պահանջումներին համապատասխան դասախոսական կազմով համալրելու:**

Վերը ներկայացված հիմնախնդիրները նպաստում են նաեւ մարդկային

<sup>7</sup>. Խոսքը վերաբերում է այն մեխանիկական վարչարարական որոշմանը, համաձայն որի արտասահման ուսման մեկնող ուսանողներից նախատեսվում է գանձել 15000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամական գրավ: Սա նման է միջնադարյան գլխազին սահմանելուն եւ հակասում է մարդու իրավունքների, հատկապես ազատ տեղաշարժման իրավունքին: Դրա շրջանցման միջոցները շատ հեշտ կգտնվեն մեր կոռումպացված կառավարման համակարգում: Արդեն մեր դաշտային միկրո հետազոտությունները ուսանողության միջավայրում, թույլ են տվել արձանագրելու մի քանի նման հնարավոր ուղիների մասին դատողություններ, որոնք չի բացառվում, որ մուտք կգործեն մեր հիվանդ համակարգ եւ կծառայեն իշխանության համապատասխան օղակների պաշտոնյաների գրպանները լցնելուն:

ունակությունների ու կարողությունների եւ հասարակությունում պրեստիժային կարգավիճակների ձեւավորման միջեւ անհամապատասխանության խորացմանը:

Այս հիմնախնդիրը նույնպես մեզանում ծագել է 1990-ականների սկզբին, երբ լիբերալիզմը Հայաստանում վուլգարիզացրած գաղափարախոսների ու կիրառողների քայքայիչ գործունեությունը հասարակությունում ձեւավորեց մի իրավիճակ, համաձայն որի հեղինակազրկվեցին այնպիսի մասնագիտություններ, որոնք, չնայած քաղաքակիրթ երկրներում ապահովում են նորմալ կենսակերպ, սակայն մեզանում դրա հնարավորությունները բացառվեցին: Դա 1990-ականների առաջին կեսին գործադրված նպատակային քաղաքականության հետեւանք էր, որը արտացոլվեց նաեւ երկրի բարձրագույն պաշտոնյաների հրապարակային մի շարք ելույթներում, որոնցում գիտության եւ գիտնականների դերն ու կարգավիճակը ծաղրանքի աստիճանի արհամարհվում էր:

Ներկայումս ձեւավորված իրավիճակում, հասարակական հարաբերություններում մասնագիտական եւ մարդկային բարձր կարողություններ ու ունակություններ ունեցող շրջանակների ներգրավվածությունը երկրի համար կարելու խնդիրների լուծմանը, խիստ ֆորմալիզացված է եւ չկան բնական խթանիչներ, որոնք կարող են նպաստել այդ շրջանակների դերի եւ հեղինակության բարձրացմանը: Հակառակ դրան, հասարակությունում պրեստիժային դերերը համապատասխանում են բացառապես բարձր եկամուտներ ապահովող ոլորտներին (անկախ նրանից, դրանք կլինեն աշխատ թե անաշխատ եկամուտներ): **Շուկայական ֆունդամենտալիզմին տուրք տալը մշակույթը, արվեստը, գիտությունը նույնպես դարձել են բիզնեսի ձեւ, ինչը բնականորեն թուլացրել է այդ ոլորտներում իրական որակներ կրողների հնարավորությունները եւ մեծացրել շուկայական որակներ կրողների:** Սակայն, ելնելով նրանից, որ մեր շուկան ինքը մարդկային կարողությունների տեսանկյունից սահմանափակ որակների առաջարկ ներկայացնող է, ապա բարձր որակի ու կարողությունների տեր անձինք կամ հարմարվում են ցածրորակ պահանջումներին, կամ հեռանում են Հայաստանից, քանի որ ոչ միայն իրենք այստեղ իրենց իրացումից չեն ստանում համարժեք նյութական փոխհատուցում, այլ նաեւ համարժեք չէ պրեստիժային ու կարգավիճակային փոխհատուցումը:

Վերը ներկայացված նյութական կարողությունների եւ մարդկային ու-



նակությունների ու կարողությունների միջև անհամապատասխանության գործոնը նպաստում է նաև պրեստիժային դերերի եւ մարդկային կարողությունների ու ունակությունների անհամապատասխանության ձեւավորմանը: Դրա հետեւանքով մարդկային բարձր ունակություններ ու կարողություններ կրողները հասարակությունում ստանում են ավելի ցածր կարգավիճակ՝ համեմատած շատ ավելի ցածր ունակություն ունեցող անձանց<sup>8</sup>: Պատահական չէ, որ այսօր Հայաստանում պրեստիժային տեսանկյունից բարձր կարգավիճակ ունեն այնպիսիները, որոնք աչքի են ընկնում կիսատգետ աշխարհին բնորոշ «բաշարելու» ունակությամբ, քան մտավորականը, որակյալ իրավաբանը, բժիշկը կամ որեւէ այլ մասնագետ: Հատկանշական է, որ եթե նույնիսկ քիչ թե շատ պրեստիժային կարգավիճակ են ձեռք բերում մասնագիտական շրջանակների ներկայացուցիչներ, ապա հիմնականում դա պայմանավորված է կամ «բաշարելու» հատկությամբ, կամ «պնակալեզությամբ»: Դրանք թվին կարելի է դասել կաշառակեր դասախոսներին, բժիշկներին, իրավաբաններին եւ պահի իշխանության քաղաքական պատվերին ծառայող այս կամ այն մտավորականին:

**Պետության առջեւ կանգնած սկզբունքային խնդիրներից է, մասնագիտական ունակություններ ունեցող մարդկային ներուժի համար պրեստիժային կարգավիճակի ձեւավորման պայմանների ստեղծումը, որն առաջին հերթին պետք է ուղղված լինի նման շրջանակների մարդկային ունակությունների ու նյութական կարողությունների միջեւ անհամապատասխանության վերացմանը:**

Ներկայումս ձեւավորված իրավիճակում մարդկային ունակությունները եւ կարողությունները, դրանք կրողներին սոցիալական շարժունության իրական հնարավորություններ կամ չեն տալիս, կամ տալիս են սահմանափակ հնարավորություններ: Սա ինքնին անհանգստացնող իրավիճակ է,

<sup>8</sup> . Բերված չափանիշները համապատասխանեցված են քաղաքակիրթ մոտեցումներին եւ փորձին: Այլապես մարդկային ունակություն կարելի է համարել նաև այսօրվա Հայաստանում «բաշարող տղա» լինելը կամ պետական իշխանության լծակները անձնական շահերին ծառայեցնելը, որը նույնպես կարողություն է, սակայն այնպիսի կարողություն, որը քաղաքակիրթ աշխարհում քրեորեն հետապնդվում եւ դատապարտվում է, «պնակալեզությունը» եւ բազմաթիվ այլ ունակություններ, որոնցով աչքի է ընկնում այսօրվա մեր պեւրոլիտան:

եթե երկիրն իր առջեւ մարդկային զարգացման հիմնախնդիրներ չի դնում եւ չի պլանավորում երրորդ-չորրորդ կարգի երկրից վերածվել երկրորդ կամ առաջին կարգի երկրի, այսինքն՝ հետամնաց եւ հետզարգացող երկրից վեր ածվելու զարգացող եւ հետո նաև զարգացած երկրի: Չարգացման կարելու պայմանը աղքատության հաղթահարումն է<sup>9</sup>: Իսկ աղքատության հաղթահարումը Հայաստանի նման բնական, կոմունիկացիոն եւ արտաքին քաղաքական ոչ հարուստ ռեսուրսներ ունեցող երկրում մարդկային ռեսուրսների ճիշտ կառավարումն է: Մի բան, որն ընդհանրապես որպես հիմնախնդիր չի էլ ձեւակերպված: Իսկ մարդկային ռեսուրսների միջոցով աղքատության հաղթահարման կարելու պայմանը սոցիալական շարժունության այնպիսի մեխանիզմների կիրառումն է, որոնք թույլ են տալիս մարդկանց իրենց տնտեսական ու հասարակական կացությունը զարգացնել ու բարելավել՝ ելնելով իրենց ունակությունների ու կարողությունների տիրապետման աստիճանից: Որպեսզի կարողությունների տիրապետումը արտահայտվի սոցիալական շարժունության ուղորտում, պետության դերը մարդկանց համար իրենց կարողությունների իրացման առումով հավասար ու նպաստավոր հնարավորությունների ու պայմանների ձեւավորումն է, որի առաջին երաշխիքը այդ հնարավորությունների ու պայմանների օրինականության ապահովումն է բոլորի համար՝ անկախ նրա զբաղեցրած դիրքից ու պաշտոնից:

Ինչպես արդեն վերը նշվել է, Հայաստանում առկա է տնտեսական դաշտում գործելու եւ դերակատարի կարգավիճակ ձեռք բերելու որոշակի դժվարություններ, որոնք մեզանում չեն կապված մարդու ունակությունների ու կարողությունների աստիճանից: Սոցիալական շարժունության հնարավորություններ ստեղծում են անձնական կապերը եւ ծանոթությունները իշխանության ու դրա հետ կապված ազդեցիկ շրջանակներում: Այսինքն, Հայաստանում, չնայած առաջին հայացքից սոցիալական շարժու-

<sup>9</sup> . Աղքատության հաղթահարման տակ նկատի չունենք դրա իսպառ բացառումը, քանի որ նման բան հնարավոր չէ նույնիսկ զարգացած երկրներում: Խոսքը վերաբերում է դրա այն չափերի կրճատմանը, որը աղքատությունը թույլ չի տալիս վերածելու հասարակության զարգացումը կանգնեցնող եւ հասարակական համագործակցությունը խաթարող երեւույթի: Նման դեպքում հասարակությունը իր հաստատությունների միջոցով կարողանում է իրագործել նաև սոցիալական ապահովության այնպիսի քաղաքականություն, որում աղքատների համար ապահովվում է կենսական եւ հասարակական պահանջմունքների բավարարման անհրաժեշտ աստիճան:

նության հնարավորությունը ձեւավորվում է տնտեսական ոլորտում, սակայն իրականում դրա հնարավորությունները թաքնված են քաղաքական համակարգի սովորաբար կապերի ու լծակների տիրապետման ոլորտում: Այսօր Հայաստանում սոցիալական շարժունության իրական եւ վերընթաց հնարավորություն իրականում տրված է այն մարդկանց ու խմբերին, որոնք ունեն վերոնշյալ անձնական կապերը:

Ստեղծված իրավիճակում իր հերթին տնտեսական անհավասարությունը պայմանավորում է բնակչության աստիճանակարգման (ստրատիֆիկացիոն) գործընթացները և հասարակական տարբեր խավերի մատչելիության անհավասարությունն այնպիսի կարևոր բարիքների նկատմամբ, ինչպիսիք են սեփականությունը, իշխանությունը և պրեստիժը: Վերջիններս պայմանավորում են նաեւ հասարակությունում այնպիսի կարգավիճակային «արտոնյալ» խմբերի ձեւավորումը, որոնք, շնորհիվ իրենց ազդեցիկության աստիճանի ու կարգավիճակի, ձեռք են բերել վերոնշյալ ոլորտների նկատմամբ վերահսկողական բացառիկ ազդեցություն: Այս խմբերն այսօր «պատմեշել» են սոցիալական մյուս խմբերի վերընթաց շարժունությունը: Սոցիալական շարժունության անհավասարության ստեղծված իրավիճակի բարդությունը նրանում է, որ այն կարող է ստանալ ժառանգականության բնույթ եւ փոխանցվել սերնդից սերունդ<sup>10</sup>:

**Երեւոյթին այս տեսանկյունից մոտենալու դեպքում աղքատությունը Հայաստանում կարելի է բնորոշել նաեւ որպէս սեփականության եւ հասարակական ստատուսի վերարտադրության անկարողություն:**

Ըստ մեր ունեցած ազգագրական նյութերի, աղքատներ են համարվում նաեւ այն մարդիկ, ովքեր չեն կարողանում պահպանել իրենց անձնական հարաբերությունների մախկին մակարդակը: Այսինքն, երբ չեն կարողանում կազմակերպել ընտանեկան հանդիսությունների հետ կապված հյուրընկալություններ, կամ պատշաճ կարգով մասնակցել նման արարողությունների, ժողովրդի արտահայտությամբ ծանոթների, բարեկամների հետ «գնալ-գալ» ունենալ կամ «կարողանում են տանից դուրս գալ»,

<sup>10</sup>. Նյութական կարողությունների եւ մարդկային ունակությունների անհամապատասխանության ազդեցությունը սոցիալական շարժունության եւ պրեստիժային կարգավիճակի վրա այսօր ցցուն ձեւով արտահայտվում է Երեւան քաղաքում պրեստիժային թաղամասերից, այսպէս կոչված, «նոր հայերի» կողմից մտավորականների աստիճանական դուրս մղումը:

նույնպէս հանդիսանում է աղքատության ցուցիչ:

Աղքատության նշան է նաեւ աշխատանքային կամ զբաղվածության անհեռանկարայնությունը: Սա իր մեջ ներառում է նաեւ մասնագիտանալու, այդ թվում եւ որակյալ կրթություն ստանալու եւ ունեցած մասնագիտական կարողությունները օգտագործելու անմատչելիությունը: **Փաստորեն, Հայաստանում աղքատությունը բնութագրվում է նաեւ անհատի ներուժը բացահայտելու եւ օգտագործելու հնարավորության եւ պայմանների անմատչելիության հատկանիշով:** Այսպէս. ըստ մեր դիտարկումների՝ բազմաթիվ, հատկապէս Հայաստանի մարզերում բնակվող աղքատ ընտանիքների երեխաներ, այսօր պարզապէս հրաժարվում են ուսումը շարունակելու մտքից, քանի որ մի կողմից՝ ԲՈՒՀ-ական համակարգում իշխող կաշառակերությունը կամ վճարովի համակարգը, մյուս կողմից՝ «քաղաքում ուսանող պահելու» ընտանիքների ֆինանսական անկարողությունը գործնականորեն անհնարին է դարձրել նրանց մասնագիտանալու խնդիրը: Այսինքն, այսօր հասարակության մեծ մասը կորցրել է հույսերը, որ իր սերունդը ապագայում կարող է «մարդ դառնալու» շանսեր պահպանել: Վերջինիս տակ բնակչության մեջ ընդունված է հասկանալ այնպիսի մասնագիտություն ձեռք բերելը, որը հնարավորություն կտա սոցիալական շարժունության սանդղակում եւ հասարակական դերերի աստիճանակարգում դիմամիկ ու պրեստիժային տեղ գրավելու:

**Ինչպէս վերն արդեն նշվեց, տեղի է ունեցել հասարակական դերերի պրեստիժային դաշտի խիստ սահմանափակում, ինչը մասնավորապէս կապված է հասարակությունում սեփականության վերաբաշխման գործընթացին այդ դերերի գործառույթի բացառումով:**

Աղքատության մեկ այլ ցուցիչ կարելի է համարել բնակչության մեծամասնության համար օրենքից օգտվելու անմատչելիությունը: Օրենքն այն օղակն է, որը հնարավոր է դարձնում հասարակության եւ պետական իշխանությունների համագործակցությունը: Սակայն վերջին տարիներս, Հայաստանում տեղի ունեցավ օրենքից բնակչության օտարում: Քանի որ օրենքի մատչելիության միակ երաշխիքը անձնական ծանոթություններն ու կաշառքն է: Օրենքների հասարակական անմատչելիության մեկ այլ պատճառ է դրանց անկատարությունը, ինչը հատկապէս հարմար չէ ֆինանսապէս թույլ խավերի եւ հարմար՝ ունեւորների համար: Այն, որ հասարակությունն այսօր խուսափում է օրենքին դիմելուց, դա առաջին հերթին

պայմանավորված է նրանով, որ օրենքը գործում է ավելի շատ վճարողի կամ իշխանությունում լծակ ունեցողի օգտին: **Ուստի օրինապաշտության իրական պատկերը Հայաստանում ոչ թե նրանում է, որ հասարակությունը չի սիրում օրենք, այլ նրանում, որ այն մատչելի չէ բաշխման/վերաբաշխման գործընթացներից դուրս մղված մեծամասնության համար, եւ խնդիրների լուծումը օրենքը շրջանցելու եւ համակեցության մեխանիկական ձեւերին դիմելու միջոցով ավելի էժան է, քան՝ օրենքի:**

Կան նաեւ աղքատության այլ բնութագրիչներ նույնպես, ինչպես ասենք՝ առողջապահական համակարգից, սպասարկման ոլորտից, տեղեկատվական միջոցներից օգտվելու անմատչելիությունը (բացառությամբ անվճար ուղորտները) եւ այլն: Ընդհանուր առմամբ, Հայաստանում աղքատության ստեղծված այս վիճակը կարելի է բնութագրել որպես պետությունից բնակչության գերակշռող մասի օտարում: Որն ի դեպ, եւ՝ գործընթաց է, եւ՝ վիճակ: Վիճակ է այնքանով, որ հասարակության համար այն իրողություն է, որում գտնվելով, նա կազմակերպում է համագործակցությունը: Գործընթաց է այնքանով, որ հասարակությունը շարունակում է փնտրել նոր պայմաններին համապատասխան համագործակցության ձեւեր եւ ներկայումս մտել է աղքատության ձեւավորման նոր փուլ: Ի տարբերություն նախորդ փուլի, երբ տեղի էր ունենում հասարակության շերտավորում ընդհանրապես, ներկայումս ակտիվորեն ընթանում է շերտավորում հասարակության 80 տոկոսը կազմող աղքատների միջեւ: Ի հայտ են գալիս ծայրահեղ չքավորներ, որոնք *զուրկ են նույնիսկ իրենց օրգանիզմի ֆիզիկական պարզ վերարտադրությունը կազմակերպելու կարողություններից*: Շերտեր, որոնք հայտնվել են կենցաղային աղքատության փուլում, այսինքն՝ *ի վիճակի չեն վերարտադրել կյանքի կենցաղային նվազագույնը* բնակարան, կահ-կարասի, բնակվարձ եւ այլն: Կան նաեւ այնպիսիները, որոնք գտնվում են հոգեւոր աղքատության փուլում: Այսինքն, *ի վիճակի չեն օգտվել կրթական, մշակութային, տեղեկատվական եւ նման բնույթի այլ արժեքներից*: Մարդիկ, որոնք հասարակայնորեն աղքատ են՝ զրկված են հասարակության մեջ սեփական օգտակարության գիտակցում հաղորդող դեր ունենալու մատչելիությունից եւ հասարակական փոխանակային (խոսքը վերաբերում է ոչ միայն նյութական արժեքների, այլ նաեւ հոգեւոր, մշակութային, հասարակական, մասնագիտական եւ այլն) գործընթացներին լիարժեք մասնակցելու հնարավորու-

թյունից:

Իհարկե, աղքատության մշված յուրաքանչյուր աստիճանն ունի նաեւ նյութական կարողությունների համարժեք բնութագիրը, որն այդ շերտի ներկայացուցչին թույլ է տալիս մասնակցել հասարակական համակեցության այս կամ այն ոլորտում ընթացող վերարտադրության գործընթացին: Ըստ այդմ էլ կցանկանայինք կանգ առնել աղքատության հետեւյալ բնութագրման վրա. այն սեփականության միջոցների նկատմամբ մարդու ունեցած հասարակական կարգավիճակն է, որը պայմանավորում է հասարակական դերերի նկատմամբ մատչելիության ցածրագույն մակարդակ: Հասարակության համար այն հատկապես վտանգավոր է դառնում, երբ խաթարվում է հասարակական դերերի վերարտադրությունը եւ գործառությունը, ըստ այդմ էլ՝ դրանց բազմազանությունը ու փոխանակային գործընթացները: Հասարակական դերերի փոխանակային գործընթացը պայմանավորում է տվյալ հասարակության համակեցության ձեւերը եւ կայունությունը, ինչը թույլ է տալիս հասարակության ներուժի բացահայտմանը եւ ի նպաստ հասարակության վերընթաց վերարտադրության, դրա ռացիոնալ եւ ստեղծագործ իրացմանը (խոսքը վերաբերում է դեմոգրաֆիկ, տնտեսական եւ մշակութային ոլորտներին): **Հասարակական դերերի բազմազանությունը թույլ է տալիս մարդուն իր ստեղծագործ գործունեության համար ընտրել իր հնարավորությունների իրացման առավել բարենպաստ մասնագիտական ոլորտը, ապահովում իր կարողություններին համապատասխան մատչելիություն սեփականության միջոցներ ստեղծելու եւ դրանք օգտագործելու:** Հասարակական դերերի փոխանակային նման գործընթացը պայմանավորված է հասարակության մեջ գոյություն ունեցող սեփականության բաշխման մեխանիզմներով: Եթե համաձայնվենք սոցիալական մշակութաբանության մեջ արտահայտված այն կարծիքին, որ գոյություն ունի տնտեսական համակարգերի երկու հիմնական տիպ՝ ա. որոնցում սեփականության օբյեկտների փոխհարաբերությունը ենթակա է (պայմանավորված է) միջանձնային հարաբերություններին եւ բ. որոնցում միջանձնային հարաբերությունները պայմանավորված են (կախյալ են) սեփականության օբյեկտների հարաբերություններով, ապա պետք է պարզել, թե ինչպիսի՞ տնտեսական համակարգ է գործում Հայաստանում եւ ինչու՞ է այն ծայր աստիճան բեւեռացրել եկամուտների ու սեփականության բաշխման/վերաբաշխման գործըն-

թացին բնակչության տարբեր խմբերի մասնակցության հնարավորությունները:

Հայաստանում աղքատության առանձնահատկությունը նրանում է, որ այն ձևավորվել է ոչ թե ի սկզբանե չունեւոր շերտի առկայության, այլ բնակչությանը ունեզրկելու հաշվին: Աղքատության այս երկու տիպերի տարբերությունը կառուցվածքային մակարդակի է: Ի սկզբանե չունեւոր բնակչությանը աղքատ հասարակությունը բնորոշվում է համապատասխան մշակույթի, աշխարհայացքի, կրոնական համակարգի եւ համոզմունքների, աշխատանքի բաժանման, հասարակական նորմերի առկայությամբ, որը չի հանգեցնում տվյալ հասարակության ազգային մշակութային նկարագրի խաթարման վտանգին այն պատճառով, որ նման հասարակությունները ունեն հասարակական շերտերի համագործակցությունը կարգավորող եւ գործառնող ադապտացված հաստատություններ:

Բնակչության համատարած ունեզրկումը հանգեցնում է ունեցվածքային գործոնով պայմանավորված մշակութային, սոցիո-նորմատիվ, կրթական, մասնագիտական համագործակցության ձևերի գործառնության խաթարման եւ դժվարացնում ազգային մշակութային նկարագրի վերարտադրությունը: Նման դեպքում հնարավոր հաջորդ քայլը հասարակության քաղաքական ինստիտուտների վերածումն է իռացիոնալ ավտորիտար համակարգի, մշակութային արժեքների որակական եւ քանակական բազմազանության սահմանափակմամբ, ռեզիոնալ տարանջատվածության խորացմամբ (լոռեցի, ապարանցի, գյումրեցի, երեւանցի, դարաբաղցի եւ այլն), էժան աշխատուժի գերշահագործման միջոցով բնակչության գոյատեւման նվազագույնը բավարարող ոչ արտադրական տնտեսությամբ, ձեւական սովորութային մեխանիկական ձեւերի միջոցով գործող օրինականությունը մերժող սոցիո-նորմատիվ հարաբերությունների հաստատմամբ:

Այսինքն, հասարակական կապերի հորիզոնական մակարդակում համագործակցությունը հանգեցնում է մեխանիկական ձեւերի գերիշխանությանը, ինչը նպաստում է հասարակական կյանքի կազմակերպումն իրականացնել սուբյեկտիվ, այլ ոչ թե օբյեկտիվ գործոնի հիման վրա: Իսկ սուբյեկտիվիզմի գերակայությունը բացառում է հասարակական ինստիտուտների ձեւավորման այնպիսի մակարդակը, երբ անհատի դերը ներդաշնակ է հասարակական շահին: Այդ դեպքում մեծանում է սուբյեկտիվ

գործոնով պայմանավորված հասարակական հաստատությունների գործառնության հնարավորությունը: Փաստորեն, զրկելով աղքատ բնակչությանը սեփականության վերաբաշխման ոլորտներում վերարտադրության հնարավորությունից, հասարակության կլանային օղակներում միավորված հարուստ շերտը հասարակությանը օտարել է պետական ինստիտուտներից, դրանց նկատմամբ իրավունքների մենաշնորհը վերցնելով իր ձեռքը: Ունենալով իշխանության եւ սեփականության նկատմամբ մատչելիության մենաշնորհ, սուբյեկտիվ հիմքերի վրա գործառնող հասարակության այս շերտը, փաստորեն, շահագրգռված չէ հասարակության մեջ աղքատության վերացմամբ: Այս խավի համար հիմնական սպառնալիքը կլանային հիմքերից զուրկ արտադրական տնտեսության առաջացումն է, քանի որ դա սպառնում է սեփականության վերարտադրության գործընթացում միջոցների տիրապետման մեխանիկական ձեւերից անցնել օրգանականին: Այսինքն, փոքրացնել հանրային սեփականության ինքնարժեքից ցածր գներով վերաբաշխման գործընթացին մասնակցության չափը կամ «արտոնյալ» կարգավիճակով գերշահութաբեր ստվերային բիզնես վարելու ծավալները, փոխարենը ավելացնելով հիմնական միջոցների ծավալը մեծացնելու գործում ներդրումները: Փաստորեն, հարուստ խմբիշխանական շերտերի համար հիմնական սպառնալիքը այսօր՝ հասարակական-տնտեսական գործընթացներում իշխող տեղեւորները նորով փոխարինելու մեջ է: Տեղեւոր, որը կարող է ներդրումների հոսք առաջացնել արտադրական (կամ սեփականության վերարտադրության օբյեկտիվ ձեւերի) ոլորտ, հակակշիռ առաջացնելով ստվերային բիզնեսի էությունը կազմող սեփականության վերարտադրության մեխանիկական ձեւերին:

Այս համատեքստում, հասարակական հարաբերությունների առումով աղքատության առանձնահատկությունը բնութագրելու դեպքում, որպես դրա բնութագրիչ, կարելի է առանձնացնել տնտեսական համակարգերի վերը նշված երկու հիմնական տիպերից առաջինից երկրորդին անցման տեղեւորների բացակայությունը: Այսինքն սեփականատիրության սուբյեկտների փոխհարաբերությունը միջանձնային հարաբերություններին ենթարկելու միջոցով՝ տնտեսության կազմակերպման տիպից սեփականության սուբյեկտների հարաբերություններով պայմանավորվող միջանձնային հարաբերությունների կազմակերպման տիպին անցման տեղեւորի

բացակայությունը: Փաստորեն, Հայաստանում աղքատության խորացումը հասարակության մեջ պայմանավորված է ստեղծված հասարակության այն տիպով, որում միջանձնային հարաբերությունները պայմանավորում են տնտեսական սուբյեկտների հարաբերությունը: Իսկ քանի որ բնակչության մեծամասնությունը սեփականության վերաբաշխման գործընթացում, ինչպես ցույց տրվեց վերը, կորցրել է հասարակության մեջ սեփականության վերարտադրության կարողությունը եւ տնտեսական հարաբերություններում սուբյեկտի ստատուսով հանդես գալու հնարավորությունները, ապա հասարակությունն ինքը դեռեւս պատրաստ չէ ներկա կառուցվածքին հակակշիռներ առաջադրել:

Հարուստների խավի մեկուսացվածությունը բացառում է նաեւ, որ Հայաստանում նշված որակները կրող տնտեսական դերակատարների գործունեությունը կարող է արտացոլել ողջ հասարակության մեջ գործող միջանձնային հարաբերությունների տարապատկերը, միեւնույն ժամանակ համապատասխան անդրադարձ թողնելով այդ հարաբերությունների վրա: Ահա այդ մեկուսացվածության գոյությունն էլ պայմանավորում է միջանձնային հարաբերություններում հասարակական դերերի բազմազանության նվազեցումն ու արժեզրկումը: Իսկ վերջինս էլ իր հերթին հանգեցնում է այդ դերերի գործառնության դաշտի կազմակերպման հիմնական մշակութային, արժեքային եւ սոցիալնորմատիվ միջոցների աղքատացման քանակական եւ որակական կրճատման:

Ինչպես արդեն նշվեց, պետությունն անցած տարիներին հասարակության աղքատացման պրոցեսի վրա, դրական առումով, վերահսկողություն չկարողացավ իրականացնել, եւ պետական կառույցների գործունեությունը վերջ ի վերջո հանգեց դրա համապատասխանեցմանը իշխանությունում ազդեցություն ձեռք բերած շրջանակների մեխանիկական շահերին եւ նրանց կողմից պետական կառույցների նկատմամբ վերահսկողության հաստատմանը: Կարելի է ասել, որ հասարակական համագործակցության տեսանկյունից պետական կառույցների գոյությունը դարձել էր ինքնանպատակ: Խոսքը վերաբերում է պետական իշխանության գործունեությունում հասարակական-քաղաքական իրողության զարգացման պահանջների արտացոլման հիմնահարցին:

Հայ հասարակության աղքատության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ունի հասարակական կյանքի կազմակերպման եւ սեփա-

կանության հասարակական վերարտադրության թարմ նախատիպ: Հասարակագիտական տեսանկյունից նշվածն այն նվազագույն մոդելն է, որից բացասական առումով հեռացման ծայրահեղ չափերը հասարակությունը չի ընդունում:

Պետք է հաշվի առնել նաեւ այն, որ Հայաստանի հասարակությունը խիստ ազգային կառույց է եւ նրա գործառնությունը պայմանավորող արժեքները ավելի շատ էթնիկ բնույթի են, քան զուտ հասարակական: Ուստի բնակչության այնպիսի զոյավիճակը, որը հանգեցնում է համատարած աղքատության, վտանգավոր է նաեւ հանրության էթնիկ նկարագրի կոնստրուկտիվ վերարտադրությունն ապահովելու տեսանկյունից : Այսպիսով, աղքատության հիմնախնդրի լուծումը պետության համար Հայաստանում ձեռք է բերել ազգային (էթնիկ բնույթի) կարելորություն:

Եթե ընդունենք քաղաքացիական հասարակությանը բնորոշ պետական կառույցների երկու տիպերի գոյության թեզը, ըստ որի տեսականորեն առանձնացվում են՝

ա. երբ պետությունը հսկում եւ կարգավորում է արտադրության եւ բաշխման գործընթացները,

բ. երբ տնտեսական գործընթացները թողնված են իրենց ընթացքին, պետության վրա թողնելով այն գործող օրենքների դաշտում պահելու ընդհանուր վերահսկողության եւ կառավարման իրականացումը, ապա դրա համաձայն կարելի է փորձել հստակեցնել մեր պետական կառույցի տեղը: **Այս տեսանկյունից այսօր դեռեւս ձեւավորման փուլում գտնվող հայկական տիպը ավելի մոտ է երկրորդին, այն տարբերությամբ, որ այստեղ պետական վերահսկողությունը համապատասխանեցված է խմբիչ-խանական ազդեցիկ շրջանակների շահերին եւ այդ տեղեկները դեռեւս գերիշխող է:**

Հարկ է հաշվի առնել նաեւ, որ անցած տարիներին արդեն ստեղծվել են երկրորդ տիպին համապատասխան գործող կառույցներ, որոնց վերստին կազմաքանդումն էլ ավելի կբարդացնի բնակչության սոցիալական վիճակը: Հայաստանի այսօրվա ներքին եւ արտաքին քաղաքական իրավիճակի համար ավելի նախընտրելի է պետության երկրորդ տիպի դասական տարբերակի ընտրությունը:

Որպես նպատակ՝ կարելու է սոցիալական խորացող ճգնաժամի կանգնեցումն ու հակառակ տեղեկների ստեղծումը: Դրա լավագույն ճանապար-

հը հիմնական միջոցների ավելացմանն ուղղված ներդրումային քաղաքականության որդեգրումն է: Միեւնույն ժամանակ, պետությունը պետք է հոգա բնակչության մեծամասնության համար գործելու հավասար ու նպաստավոր օրինական հնարավորությունների ու պայմանների ձեւավորումը: Այսինքն պետության խնդիրը խաթարված վերարտադրական գործընթացների առողջացումն է՝ դրանցում առկա մարդկային ներուժի հնարավորությունների օգտագործման եւ ինքնաներգրավման համար նպաստավոր պայմանների ձեւավորման միջոցով: Մարդկային առկա ռեսուրսների ակտիվացումը եւ դրանց շրջանառության համար պայմանների ստեղծումը այն հիմնական ուղին է, որը կարող է աղքատության հաղթահարման գործընթաց ներգրավել հանրապետության ողջ բնակչությանը, ինչը կնպաստի ոչ միայն ինքնին աղքատության, այլև *հասարակական աղքատության հաղթահարմանը*: Վերջինիս հաղթահարումն է, որ ռազմավարական նշանակություն ունի պետականության զարգացման եւ ազգային անվտանգության ամրապնդման տեսանկյունից, քանի որ ազգային անվտանգության գործոնի է վերածում նաեւ ՀՀ բնակչության տարբեր խավերին, ի տարբերություն նրա, որ ներկայումս պարտադրված աղքատության պատճառով բնակչության մեծամասնությունը զրկված է պետականության զարգացման ու ազգային անվտանգության ոչ միայն գործոն, այլ նույնիսկ գործիք դառնալու հնարավորությունից: Իսկ թե ի՞նչ գործոններ կարող են նպաստել նշվածի իրագործմանը, կանդրադառնանք աշխատանքի հաջորդ բաժնում:

### 3. Աղքատության եւ կրթական, մշակութային խնդիրների փոխազդեցությունը

Ելնելով նախորդ երկու բաժիններում ներկայացված մոտեցումներից, որոնք հիմնականում վերաբերում էին աղքատությունը պետականության զարգացման դիտանկյունից վերլուծելուն, աղքատության բնորոշումներից ամենից առանցքայինը պետք է համարել այն, ըստ որի աղքատությունը դիտվում է որպես մարդկային ունակությունների, սեփականության/եկամուտների վերարտադրության անկարողություն: Այս համատեքստում աղքատության առաջացրած հիմնական վտանգն այն է, որ

- բնակչության ստեղծագործական ու կոնստրուկտիվ ունակություններ ունեցող շրջանակները օտարված են հասարակական-պետական գործընթացների մատչելիությունից, ինչով պայմանավորված՝ չունեն նաեւ պրեստիժային կարգավիճակ հասարակությունում,
- բնակչության գերակշիռ մասը զրկված է իր ունակությունները եւ կարողությունները զարգացնելու հնարավորությունից
- բնակչության մեծամասնության համար չեն ստեղծված իրենց ունակություններն ու կարողությունները իրացնելու ու վերարտադրելու օրենքով երաշխավորված հավասար հնարավորություններ ու պայմաններ ապահովող մեխանիզմներ և ինստիտուցիոնալ կարգ
- բնակչության մեծամասնությունը զրկված է իր կարողությունների ու ունակությունների զարգացման եւ իրացման հիման վրա սոցիալական եւ կարգավիճակային վերընթաց շարժունության հնարավորությունից,
- բնակչության մեծամասնությունը օտարված է իշխանությունից եւ պետությունից՝ չցուցաբերելով պետական անվտանգության գործոնի դեր ստանձնելու ձգտում:

Կարելի է ասել, որ աղքատության հաղթահարման հիմնախնդիրը ուղղակիորեն կապված է մարդկային ռեսուրսների զագացվածության, զարգացման հնարավորությունների ու հասարակական-քաղաքական կյանք ներգրավման աստիճանից: Այս համատեքստում, պետականության զարգացման խնդիրների դիտանկյունից աղքատության հաղթահարման առանցքային գործոն է մարդու ունակությունների ու կարողությունների վերարտադրողականությանը նպաստելուն ուղղված քաղաքականության իրագործումը: Նման մոտեցման դեպքում առանցքային կարեւորություն է

ստանում կրթության հիմնահարցը, քանի որ այն մարդկային ունակություններ ու կարողություններ ձեւավորող հիմնական օղակն է:

Կրթական համակարգը, ինչպեսև հասարակական ու պետական կյանքի մնացած բոլոր ոլորտները զգալի ազդեցությունների ենթարկվեցին անցումային շրջանի տարերային քաղաքականության հետեւանքով: Հայաստանում առողջապահական եւ կրթական համակարգի հիմնախնդիրներին նվիրված մեր կողմից իրականացված հարցումները<sup>11</sup> ցույց են տալիս, որ կրթական համակարգի, հատկապես որակյալ կրթության առումով, մատչելիության նկատմամբ արդեն 1990-ականների առաջին կեսին ձեւավորվել էին լուրջ բեւեռացումներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ԲՈՒՀ-ական կրթության մատչելիության անկմանը մարզերում, միջնակարգ որակյալ կրթության անբավարար մատչելիությունը մարզերի ու երեւան քաղաքի արվարձանային թաղամասերում:

Կրթությունը հասարակական կյանքի այն ոլորտն է, որն ուղղակիորեն ենթարկվում է ոլորտում կատարվող փոփոխություններին, քանի որ դրանք փոխում են նաեւ կրթական համակարգի առջեւ դրվող հասարակական խնդիրները՝ գիտելիքի հաղորդման, դաստիարակության եւ ընդհանրապես սերնդի սոցիալիզացիայի: Իսկ այդ խնդիրները չափազանց դինամիկ են, հատկապես հասարակական ֆորմացիայի արմատական վերափոխման եւ դրա հետ կապված նոր սոցիալական իրավիճակի ձեւավորման պայմաններում:

Վերջին տարիներին հասարակական գործընթացներից ամենից ակնառուն եւ էականը հասարակության դեզինտեգրացիան է, որն ընթանում է հիմնականում երկու կտրվածքով՝

ա. ունեցվածքային հիմքի վրա հասարակության բեւեռացմամբ ունեւորների (մոտ 3-4%) եւ գոյատեւման կարողություններ ունեցողների (մոտ 80%)<sup>12</sup>,

բ. բնակչության մասնագիտական զբաղվածության բազմազանության խիստ կրճատմամբ: Այսինքն՝ այսօրվա կրթական համակարգը գործում է

<sup>11</sup> . Հարցումներն իրականացվել են Լոռու, Շիրակի, Սյունիքի, Արարատի մարզերում եւ Երեւան քաղաքում: Հետազոտությունն իրականացվել է ֆոկուս խմբային հարցման մեթոդով՝ 1996 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Հարցման նյութերը պահվում են հեղինակի Դաշտային Ազգագրական հետազոտությունների ամձնական արխիվում:

<sup>12</sup> . Ներկայացված թիվը հենվում է անկախ փորձագիտական տվյալների վրա:

ունեցվածքային առումով բեւեռացված եւ մասնագիտական դիֆերենցիացիայի տեսանկյունից պարզ, համարյա միօրինակ հասարակությունում եւ կարելի է ասել, ուղղված է բավարարելու մասնագիտական ոչ բարձր որակներ կրող մարդկային ներուժի ձեւավորման պահանջարկը: Եթե շարժվենք շուկայական այս մոտեցմամբ, ապա կարելի է ասել, որ կրթական համակարգին այսօր չի ներկայացվում բարձր որակների ապահովման պահանջարկ եւ այդ պատճառով Հայաստանի կրթական համակարգը կորցնում է իր երբեմնի որակները եւ վեր է ածվում միջին կամ միջինից ցածր մասնագիտական կարողությունների վերարտադրության ունակ համակարգի: Սակայն, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նման մոտեցումը բացարձակապես չի կարող նպաստել ինչպես աղքատության հաղթահարմանը, այնպես էլ հակասում է պետության զարգացման ու անվտանգության հիմնախնդիրներին, ապա այս դեպքում չի կարելի բավարարվել կրթության հարցում շուկայական պարզունակ մոտեցումներով, եւ կրթության նկատմամբ քաղաքականության որդեգրումը կարող է ունենալ ռազմավարական նշանակություն ինչպես աղքատության հաղթահարման, այնպես էլ մարդկային ու պետական զարգացման, հետեւաբար եւ անվտանգության խնդիրների տեսանկյունից:

Բնակչական սոցիալական վիճակի փոփոխությունը եւ կրթության հիմնահարցի փոխակապվածությանը ունի երկու սայր, քանի որ մի կողմից՝ առկա է աղքատության բացասական անդրադարձ կրթության վրա, եւ մյուս կողմից՝ կրթության ոլորտում առկա ետընթացը հղի է բացասաբար անդրադառնալու աղքատության հաղթահարման հնարավորությունների ձեւավորման վրա: Աղքատության եւ կրթության հիմնահարցերում առկա են մի շարք հիմնական կապեր ու ազդեցություններ՝

- աղքատությունն էականորեն ազդել եւ ազդում է կրթության վրա ու մի կողմից՝ նպաստում է կրթության որակի անկմանը, եւ մյուս կողմից էլ՝ բավականին նեղացրել է որակյալ կրթության մատչելիություն ունեցող եւ պահանջարկ ներկայացնող սոցիալական խավերի թիվը,

- երկրում պետական մակարդակով աղքատության ձեւավորման պատճառով, զգալիորեն նվազել են կրթական նպատակով բյուջետային ծախսերը,

- կրթության որակի եւ որակյալ կրթության մատչելիության անկումը միայն բացասականորեն կարող է ազդել աղքատության հաղթահարման

խնդրին, քանի որ ցածրորակ կրթությունը չի կարող երաշխիք դառնալ մարդկային կարողությունների զարգացման, որը մի կողմից՝ անձի մակարդակով թուլացնում է նրա ինքնաիրացվելու շանսերը, մյուս կողմից՝ բարդացնում աղքատության հաղթահարման հնարավորությունը պետական մակարդակով: Թույլ բնական եւ կոմունիկացիոն ռեսուրսների առկայության դեպքում նաեւ թույլ մարդկային կարողություններով ռեսուրսները երաշխիք չեն կարող դառնալ երկրի զարգացման համար եւ խուսափելու քրոնիկական աղքատ երկիր դառնալու վտանգից:

Դատելով կրթության ոլորտում առ այսօր առկա պետական մոտեցումներից ու տարվող քաղաքականությունից, կարելի է ասել, որ այստեղ դեռեւս հստակ չէ, թե ինչպիսի նպատակներ հետապնդող կրթական համակարգ ենք ուզում ձեւավորել Հայաստանում ու երկրի զարգացման եւ այդ համատեքստում նաեւ աղքատության հաղթահարման տեսանկյունից այն ինչ խնդիրների ու հիմնահարցերի լուծմանը պետք է միտված լինի:

Որպեսզի պատկերացնենք, թե ինչ վիճակում է գտնվում ներկայումս մեր կրթական համակարգը եւ որքան է երկրի զարգացման եւ աղքատության հաղթահարման գործում կրթական համակարգի ներուժը, ծանոթանանք, որոշ վիճակագրական փաստերի: Ըստ դրանց, կրթությանը վերաբերող մի շարք տվյալներով, Հայաստանը ԱՊՀ երկրների շարքում զբաղեցնում է վերջին տեղերից մեկը: Դրանք հատկապես վերաբերում են նախադպրոցական հաստատություններում համապատասխան տարիքային խմբի ընդգրկվածության աստիճանին, բազային կրթության մեջ ընդգրկվածների (6-14 տարեկանների խումբ), բարձրագույն կրթության մեջ ընդգրկվածների (19-24 տարեկանների խումբ) թվին, կրթության վրա բյուջետային ծախսերին: Բազմաթիվ պրոբլեմներ են առկա ինչպես դպրոցական, այնպես էլ ԲՈՒՀ-ական կրթական համակարգերում: Դրանք վերաբերում են ինչպես ուսուցիչների ու դասախոսների վարձատրության, կոնտինգենտի ծերացման, նրանց մասնագիտական որակավորման, գրադարանների հագեցվածության, տեխնիկական հագեցվածության, դասագրքերի մատչելիության խնդիրներին: Սակայն աղքատության բացասական ազդեցությունը կրթության վրա ամենից սուր նկատելի է ընտանեկան մակարդակում:

Սոցիալական շերտավորման պատկերը դպրոցում առաջին հերթին արտահայտվում է ուսումնական շրջանում աշակերտների առաջնային

կարիքների, այսինքն՝ հագուստով, սննդով, եւ դասագրքերով ապահովելու խնդրում: Միայն սեպտեմբերի 1-ին երեխաներին նոր ուսումնական տարուն նախապատրաստելը հարցման ենթարկված ընտանիքներից շուրջ 85%-ի շրջանում լուրջ բարդություններ է առաջացնում (պարտքեր, ապրանքային արժեք ունեցող ունեցվածքի վաճառք եւ այլն):

**Սոցիալական շերտավորման առաջնային ցուցիչները աշակերտների միջավայրում:** Աշակերտների միջավայրում սոցիալական շերտավորման առաջնային հիմնական ցուցիչը հագուստն է, դրա համար ծնողների հիմնական ծախսերն ուղղված են դրան: Ըստ այդ ցուցիչի, երեխաների մեջ տարբերակվում են երեք շերտ՝ ունեւորներ, միջիններ եւ չքավորներ: Հարուստները հագնվում են թանկարժեք եւ բազմազան: Միջինները հագնում են նոր, բայց ոչ թանկարժեք եւ ունեն մեկ կամ երկու տեսակի հագուստ: Չքավորները սովորաբար հագուստ ձեռք են բերում բարեկամների ու ծանոթների նվիրատվության միջոցով կամ հագնում են հնամաշը: Պատահում են դեպքեր (հատկապես մարզերում), երբ երեխաները ներկայանալի հագուստ չունենալու պատճառով ամիսներով, եզակի դեպքերում՝ տարով դպրոց չեն հաճախում: Սոցիալական շերտավորումը նկատելի է դառնում նաեւ դասագրքերի ձեռք բերման հարցում, որը սակայն նախորդ տարիների համեմատ որոշ, առումով մեղմվել է: Սակայն, դեռեւս քիչ չէ կարիքավոր եւ աղքատ շերտից այն երեխաների թիվը, որոնք դասագրքերի խնդիրը լուծում են մասնակի կամ խիստ մասնակի: Նրանք հիմնականում օգտվում են մի քանի ժամով դասագրքեր փոխառելու կամ կամ ուրիշի դասագրքերից դասերն արտագրելու պրակտիկայից, ինչն անշուշտ, բացի ուսման նկատմամբ երեխայի հետաքրքրության անկումից, նաեւ նպաստում է նրա սոցիալական ստորակարգմանը:

Նշված սոցիալական իրավիճակն աշակերտների միջավայրում առաջացնում է խմբավորումներ ըստ ընտանիքների ունեցվածքային հատկանիշի եւ երեխաների հետաքրքրությունը շեղում ուսումնական խնդիրներից նյութականի վրա: Որպես պրեստիժային եւ կարգավիճակային չափանիշներ դպրոցում գործում են ոչ թե գիտելիքը ու առաջադիմությունը, այլ նյութականը: Աշակերտների միջավայրում ընդօրինակման առարկա է ծառայում ոչ թե սովորողը, այլ լավ հագնվողը, թանկարժեք գրիչներ, տետրեր, պայուսակ ունեցողը: Իսկ քանի որ թանկարժեք հագնվողը, որպես կանոն, լավ սովորող չէ (բայց բարձր գնահատականներ չի վերջո



ստանում է) երեխաների մոտ կորում է ուսման նկատմամբ արժեքային մոտեցումը: Գիտելիքը կրթական օջախներում այսօր արժեք չէ: Ի դեպ, այն դադարել է որպես իրական արժեք գնահատվել նաեւ հասարակության մեջ: Օրըստօրե դպրոցներում ավելի է տարածվում այն մթնոլորտը, երբ դասարաններում սովորող եւ գիտելիքի նկատմամբ հակում ցուցաբերող երեխաները ենթարկվում են ծաղրանքի: Հետազոտությունների ժամանակ նույնիսկ գրանցվել են դեպքեր, երբ երեխան, պատրաստ լինելով դասին, միջավայրի ծաղրանքից խուսափելու պատճառով հրաժարվել է դասը պատասխանելուց՝ գերադասելով ցածր գնահատական ստանալը: Այս մթնոլորտը երեխային կանգնեցնում է կամ միկրոսոցիալական միջավայրից (համադասարանցիներ), կամ կրթական պրոցեսից օտարման ընտրության առաջ:

Գիտելիքի պրեստիժային կարգավիճակը, համեմատած նյութական արժեքների հետ, չափազանց ցածր է նաեւ հասարակության մեջ՝ կապված աշխատանքային զբաղվածության բազմազանության անկման եւ գիտելիքի միջոցով վաստակելու ցածր հնարավորությունների հետ: Հակառակը, վաստակելու հնարավորությունների սահմանափակումը զվարավորապես առեւտրի կամ հանցավոր ուղիներին հարելու միջոցով (պաշտոնական եւ ոչ պաշտոնական աղբյուրների միջինացված տվյալներով, սովերային տնտեսությունը տատանվում է 60-70%-ի սահմաններում) այսօր պրեստիժային կարգավիճակ է ստեղծել այդ խավի համար՝ վերջինս դարձնելով նաեւ գործունեության ինքնուրույն ուղի ընտրելու ճանապարհին գտնվող մատաղ սերնդի ընդօրինակման առարկա: Այդ է պատճառներից մեկը նաեւ, որ դպրոցահասակ երեխաների իդեալ է դառնում նաեւ հանցավոր ուղիներով հարստացող հարուստի կերպարը, իրեն ուղեկցող ատրիբուտներով՝ ճոխ առանձնատուն, ցոփ ու շվայտ ժամանց, թանկարժեք մեքենաներ, հագուստեղեն, յուրահատուկ ժարգոն եւ այլն: Այս հիմքի վրա աշակերտների միջավայրում ազդեցիկ դիրքում գտնվում են նշված իդեալին հարող դպրոցականները, ինչն իրական խոչընդոտ է պատանիների միջավայրում ուսումնական ծրագրերն իրենց բուն նպատակին ծառայեցնելու, գիտելիք հաղորդելու ու կրթելու համար:

**Սոցիալական առաջնային ցուցիչները եւ ուսուցիչների դերի եւ ընկալման փոփոխությունները:** Ուսուցչի սոցիալական վիճակի անկումը առաջին հերթին պայմանավորված է ցածր աշխատավարձով, որը չի բավարա-

րում նրան իր մասնագիտական հմտությունները լիարժեք եւ արդյունավետ իրացնելու ու վերարտադրելու: Նշված պատճառով ուսուցիչը հասարակության միջին ապրելակերպ ունեցող խավից հայտնվեց աղքատ խավի չքավոր սանդղակում: Դա բնականաբար դպրոցը զտեց առաջին հերթին աշխատունակ տարիքի տղամարդ եւ որակյալ ուսուցիչներից: Մեր ուսումնասիրած դպրոցներում նման ուսուցիչների թիվը վերջին վեց տարիների ընթացքում կրճատվել է Երեւան, Գյումրի քաղաքներում եւ մի շարք շրջկենտրոններում՝ շուրջ 65-70%-ով: Դրա հիմնական պատճառները, գոյատեւման առաջնային պահանջները ուսուցչին աշխատանքով բավարարելու ամհնարիցությունն է: Դրանք կապված են հիմնականում հագուստի, տրանսպորտային ծախսերի եւ սննդի կարիքների բավարարման հետ: Ի դեպ քաղաքներում ավելի կարելուրվում է ներկայանալի հագուստը, գյուղերում՝ երեքը հավասարաչափ: Որոշ դպրոցներում ուսուցիչների շահագրգռվածությունը բարձրացնելու համար դիմում են մասնավոր պարապմունքների կիրառմանը: Սակայն, սոցիալական անառողջ հողը չի արդարացնում նաեւ այս միջոցի կիրառումը: Նախ, բոլոր ուսուցիչները չէ, որ կարողանում են ձեռք բերել նման դասընթացներ վարելու իրավունք եւ դրա համար անհրաժեշտ է փոխշահավետ, ներքին անօրինական համաձայնության հասնել դպրոցի ղեկավարության հետ: Երկրորդ՝ ուսուցիչները միտումնավոր ձեռով հիմնական դասաժամերը վարում են ցածր մակարդակով, իսկ երեխաներից պահանջում մատուցվածից բարձր իմացություններ, անուղղակիորեն ստիպելով, որ նրանք դիմեն վճարովի պարապմունքներին: Սակայն, շատ ընտանիքներ ի վիճակի չեն դրան, ինչի պատճառով նախ՝ ընկնում է երեխայի ուսման որակը, երկրորդ՝ հոգեբանորեն օտարում երեխային դպրոցից, երրորդ՝ հեղինակագրկում ուսուցչին խորացնելով նրա եւ միջնորդավորված ձեռով նաեւ գործող դպրոցական համակարգի նկատմամբ անվստահությունը ծնողի եւ երեխայի, այսինքն՝ կրթական համակարգի հետ անմիջականորեն առնչվող հասարակության համապատասխան օղակներում: Այս առումով ավելի դրական լուծում կարելի է համարել անհատական-մասնավոր պարապմունքները, որի դեպքում նախ՝ չունենոր աշակերտները չեն ենթարկվում սոցիալական ստորացման, երկրորդ՝ ուսուցիչը միտումնավոր եղանակներ չի կիրառում վճարովի աշակերտներ ձեռք բերելու համար եւ պահպանվում է կամավորության սկզբունքը, երրորդ՝ ծառայում է երեխային հիմնավոր գիտելիք

հաղորդելուն: Ցավոք, նշվածը, համակարգի մակարդակով, միակ փորձն է ուսուցիչների նյութական վիճակը բարելավելու ուղղությամբ: Ինչ վերաբերում է վճարովի դպրոցներին, ապա դրանց դերն այնքան փոքր է, որ ուսուցիչների սոցիալական պրոբլեմների լուծման մեջ առայժմ տեմդեմ չի առաջացնում: Որպես կանոն, այդ դպրոցներում ներգրավվում են մեծ հեղինակություն ունեցող ուսուցիչներ կամ գիտական հիմնարկների աշխատակիցներ: Իսկ աշխատանքի տեղավորման գործում մեծ դեր են խաղում անձնական ծանոթությունները եւ նույնիսկ կաշառքը: Ի դեպ, կաշառքի գործոնը լայն տարածում է ստանում դպրոցներում ոչ միայն ուսուցիչ-վերահաս կտրվածքով, այլև բարձր գնահատականներ նշանակելու դեպքում: Կաշառքին, որպես համագործակցության ձեւի մոտեմալու դեպքում ստացվում է հետեւյալ պատկերը: Երեխայի կրթության եւ դպրոցական ուսուցման ազգային ընկալման մեջ մեծ տեղ է տրվում գնահատականների հետ կապված ցուցանիշներին: Ուստի նման «բարձր արդյունքը» ծնողների համար ավելի կարեւոր է, քան գիտելիք ստանալը: Ստացվում է այնպես, որ ստերեոտիպի հիմքի վրա ծնողները կաշառում են ուսուցիչներին բարձր գնահատականների դիմաց, իսկ թե իրականում որքան ջանք է թափվում երեխայի վրա, ինչ աշխատանք է կատարվում, դա ծնողին չի անհանգստացնում: Այստեղ կաշառքը հանդես է գալիս որպես մեխանիկական հասարակությանը բնորոշ սիմուլյատիվ փոխանակության ձեւ: Բարոյական, արժեքային տեսանկյունից սա նշանակում է, որ հասարակության մեջ այսօր կա մի խավ, որը երեխային գիտելիք հաղորդելը ստորադասում է դատարկ գնահատականից, ինչն, ի վերջո, վեր է ածվում ԲՈՒՅ-ական «փողով գնված» գնահատականների եւ դիպլոմի: Այսինքն՝ իրականում հասարակության այս զանգվածը պատրաստ է վճարել դե յուրե կրթության դիմաց քան, դե ֆակտո: Նման իրավիճակում ծնողը, ըստ էության, բացասաբար է ազդում երեխայի կրթության վրա, քանի որ մի կողմից՝ կաշառքի միջոցով նրան օտարում է կրթության պրոցեսից, օժանդակում ուսուցչի օտարմանը երեխայի կրթության գործից եւ մյուս կողմից՝ իր երեխայի կրթության գործից օտարում է ինքն իրեն: Այսպիսով, դպրոցում կաշառքի երեւույթը ոչ միայն չի ծառայում երեխային ավելի խոր գիտելիք հաղորդելուն, այլեւ ծառայում է երեխային, ուսուցչին եւ ծնողին երեխայի կրթական պրոցեսից օտարման խորացնելուն: Դպրոցներում կաշառքի դիմում են հիմնականում ոչ կարիքավոր եւ ապահով ընտանիքների ծնողները, որոնց

մեծ մասը մշակութային եւ հասարակական արժեքների նկատմամբ ունի թույլ կողմնորոշում եւ հիմնականում առաջնորդվում է անհատական, նյութական նշանակության արժեքներով: Այս խավը, գերադասելով անհատական եւ մեխանիկական բնույթի արժեքները, չի կարեւորում դպրոցի դաստիարակչական դերը, որպես մշակութային եւ հասարակական արժեքների հաղորդող, հիմնականում բավարարվելով ընտանիքի եւ փողոցային՝ բակային-թաղային միջավայրում իր նախընտրելի արժեքներով: Նման տիպի ընտանիքների կրթության եւ դաստիարակության գործին նշված մոտեցումների արդյունքում կրթությունից օտարումը եւ գլխավորապես հասարակական մեխանիկական բնույթի արժեքների յուրացումը, պատանեկության այդ շերտին վերածում է ոչ կոմպետենտ եւ մեխանիկական համագործակցությամբ բնորոշվող հասարակական ներուժի, որը պիտանի չէ ժողովրդավարական հասարակության հիմքը կազմող օրգանական եւ պրոֆեսիոնալիզմի սկզբունքների կիրառմանը եւ արժեքների վերարտադրությանը: Բնական է, որ կաշառքը, որպես հասարակական համագործակցության մեխանիկական արատավոր ձեւ, պետք է նպաստեր հենց մեխանիկական արժեքների փոխանցմանը եւ վերարտադրությանը: Պարզապես, հետաքրքիրն այն է, որ ծնողները, երեխայի ուսուցման համար կաշառք տալով, հատուկ չեն մտածում հասարակության մեջ նման գործընթացների արմատավորման ուղղությամբ, բայց կաշառքը առնչվելով այնպիսի հասարակական հաստատությանը, ինչպիսին դպրոցն է, ծնում է համապատասխան փաստ-արդյունք:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հասարակական նշանակության տեսանկյունից նման սկզբունքներով կրթություն ստացողները չեն կարող սերնդի արժեքային վերարտադրության տեսանկյունից աջակցել ժողովրդավարական եւ պրոֆեսիոնալ պետա-հասարակական կառույցի ստեղծմանը կամ ամրապնդմանը, այլ հակառակը՝ իրավիճակի նման զարգացման դեպքում կհամալրեն «հակառակորդների» շարքերը:

Վերջին տարիների մեր հետազոտությունների արդյունքում արձանագրվեց մի փաստ եւս. այն ընտանիքները, որոնցում ցածր է ծնողների կրթական ցենզը եւ մասնագիտական որակավորումը, ցածր է նաեւ երեխաների կրթության նկատմամբ հետաքրքրությունը: Վերջին տարիների արտագաղթը Հայաստանից խլեց գլխավորապես հենց բարձր կրթական ցենզ եւ մասնագիտական որակավորում ունեցող խավին, որոնցից շատերը ար-

տագաղթել են ընտանիքներով, այդ թվում՝ երեխաների հետ միասին: Դա կազմում է բնակչության այն զանգվածը, ովքեր շահագրգռված էին եւ հետեւում էին երեխայի կրթությանը: Իրենց հերթին այդ ընտանիքների երեխաները, կազմելով աշակերտների զանգվածում ոչ փոքր մաս, որոշակիորեն ազդում էին աշակերտների միջավայրում գիտելիքի եւ ուսման նկատմամբ վերաբերմունքի ձեւավորման վրա:

Բացի այդ, նկատելի է նաեւ մեկ այլ տենդենց՝ Երեւանի ծայրամասերի դպրոցներից հոսք կենտրոնական պրեստիժային դպրոցներ, որտեղ ուսուցման պրոցեսի կազմակերպումը ավելի բարձր մակարդակի վրա է դրված: Սակայն սոցիալապես անապահով ընտանիքները չեն կարող դա իրենց թույլ տալ, ինչը բացասաբար է անդրադառնում երեխայի նորմալ կրթություն ստանալու վրա:

Ինչ վերաբերում է ընտանիքի սոցիալական անապահովության ազդեցությանը երեխայի կրթության վրա, այն, բացի նյութականից եւ ֆինանսականից, ունի նաեւ որակական կողմ: Սոցիալապես անապահով ընտանիքների մեծամասնությունը ազգային եւ համամարդկային տեսանկյունից ցածրորակ մշակութային արժեքների կրողներ են, ինչի ժառանգորդը դառնալը առանձնահատուկ գիտելիքներ եւ ինֆորմացիա ստանալու պահանջ ու շահագրգռվածություն չի առաջացնում ոչ երեխայի, ոչ էլ ծնողների մոտ: Սոցիալապես անապահով վիճակում հայտնված ընտանիքներից շատերը միջնակարգ կամ ութնամյա կրթությամբ եւ ցածր որակավորում ունեցող բանվորներն են կամ արհեստավորները: Այս սոցիալական խավը վերջին տարիներին համալրվեց նաեւ մտավորականության եւ ծառայողական խավի հաշվին: Վերջիններս երեխաների կրթության նկատմամբ իրենց մոտեցմամբ խիստ տարբերվում են սոցիալապես անապահով մյուս խավերից եւ ընդհանրապես են սրանց հետ միայն նյութական եւ ֆինանսական պրոբլեմների տեսանկյունից: Տոկոսային հարաբերությամբ նշված խավի երեխաները մարզերում եւ գյուղական շրջաններում կազմում են ոչ ավել, քան 3-4%, իսկ Երեւան քաղաքում՝ 14-15%: Սակայն այս խավի ընտանիքի երեխաները ենթարկվում են մյուսների ստեղծած մթնոլորտին չարտահայտելով կրթության նկատմամբ իրենց ընտանիքների դիրքորոշումը: Այս երեխաների հիմնական մասը, հատկապես բարձր դասարաններում, հաճախ հարում է շրջապատի կարծիքին՝ հրաժարվելով իր ընտանիքի մոտեցումներից:

Ներկայումս Հայաստանում տեղի է ունենում «լավ» եւ «վատ» դպրոցների ինտենսիվ տարբերակում: «Լավերը» տարբերվում են «վատերից» նրանով, որ նախ՝ գտնվում են Երեւանի կենտրոնական մասում, երկրորդ՝ դրանցում սովորում են ունեւոր կամ ոչ կարիքավոր ընտանիքների երեխաները, երրորդ՝ ունեն որակյալ մանկավարժական կադրեր, չորրորդ՝ տիրապետում են ֆիզիկակապես բարվոք վիճակում գտնվող դպրոցական շենքերի: Նման երկու դպրոց կա նաեւ Գյումրիում, եզակի դպրոցներ կան գիմնազիաներ մարզերում: Բացի նշվածից, նման տարբերակում կա նաեւ դասարանների միջև: «Լավ» դասարաններում կուտակվում են սովորելու ձգտում ունեցող աշակերտները, դասավանդում են համեմատաբար որակյալ ուսուցիչներ, ծնողների միջոցներով կազմակերպվում է այդ դասարանների դասասենյակների նորոգում, անհրաժեշտ դասագրքերի կամ ձեռնարկների ձեռք բերում եւ այլն: «Վատ» դպրոցներում կան «վատ» դասարաններում սովորում են հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ: Դիտարկումները ցույց են տալիս, որ այդ երեխաների ծնողները գյուղական բնակավայրերում զբաղվում են 20-րդ դարասկզբի մակարդակում գտնվող գյուղատնտեսությամբ, քաղաքներում՝ մանր առեւտրով, բանվորությամբ կամ վարձու եղանակով ֆիզիկական աշխատուժի էժան վաճառքի այլ ձեւերով, կան գործազուրկ են եւ օգտվում են ցածր վաստակի էպիզոդիկ հնարավորություններից, կամ զբաղվում մանր հանցագործությամբ:

Սոցիալական բեւեռացումը եւ մասնագիտական զբաղվածության բազմազանության նեղացման իրավիճակը, դպրոցի աշակերտների ու ուսուցիչների միջավայրում նշված սոցիալական հետեւանքներից զատ, ազդեց նաեւ դպրոցի առջև դրված խնդիրների վրա:

Մեզանում ի հայտ եկավ «օրվա հացի փող առնելու», «յուլա զնալու», «ընտանիք պահելու» գոյատեւման մասին արտահայտությունները, որոնք վերջին տարիներին դարձել են Հայաստանի հասուն բնակչության կողմնորոշիչները: Այս պարագայում հատկապես հստակ է արտահայտվում հայտնի «նպատակը արդարացնում է միջոցը» ասույթը: Երեւույթն այլ ազդեցություն կարող էր ունենալ, եթե մինչամցումային Հայաստանի թե տնտեսության զարգացածության աստիճանը, թե նրանով պայմանավորված բնակչության տնտեսական համագործակցության ու վերջինիս առաջացրած արժեքները, մշակութային դաշտը եւ ժողովրդի կենսամակարդակը չգտն-

վելին ավելի բարձր մակարդակի վրա, քան ներկայումս է: Միգրացե այդ դեպքում ինչ-որ կերպ ընդունելի լինելը զարգացող երկրների համար առաջարկվող մոդելների կիրառումը Հայաստանում:

Խնդիրն այն է, որ Հայաստանը, ունենալով բազմաթիվ որակյալ մասնագիտացված մարդկային ռեսուրսներ կարող էր վերակառուցել իր տնտեսությունը տվյալ ռեսուրսների որակավորման բարձրացման միջոցով, հնարավորին չափ մաքսիմում օգտագործելու ճանապարհով: Նման դեպքում կպահպանվեր նաև մասնագիտական եւ հասարակական դերերի բազմազանության հասարակական պահանջարկը: Դա կնշանակեր ընտրել տնտեսության վերակառուցման արմատական ուղին, որի դեպքում տնտեսության զարգացումը ոչ թե ինքնամպատակ է, այլ ծառայում է առողջ հասարակության եւ այն կազմող անհատների զարգացմանը:

Հայաստանի գլխավորապես արտադրական եւ ծառայողական աշխատուժին մասնագիտական աշխատանքի հնարավորությունից զրկելը հանգեցրեց նաև աշխատանքի ընկալման ստերեոտիպերի փոփոխման: Եթե նախկինում աշխատանքը, բացի վաստակելու միջոցից, նաև մարդու ստեղծագործական եւ հոգեկան պահանջմունքները բավարարելու միջոց էր, այսօր այն գլխավորապես վաստակելու եւ վերը նշված «ընտանիք պահելու», «յուլա գնալու», «օրվա հացի փող առնելու» միջոց է: Այսինքն, այն կորցրել է իր ստեղծագործական եւ հոգեկան բովանդակությունը՝ խիստ ազդելով նաև այն կրողների արժեքային մոտեցումների ու ընկալումների վրա: Այսպես, աշխատող բնակչության 70 տոկոսի զբաղվածությունը մանր, գլխավորապես փողոցային-տոնավաճառային առևտրով, մարդուց մեծ որակներ չի պահանջում եւ որոշ ծնողների խոսքերով, այսօր տարրական գիտելիքները երեխային բավական են կյանք մտնելու ու վաստակելու համար, քանի որ վաստակելու հնարավորություններն են չափազանց սահմանափակ: Ինչ վերաբերում է նոր, բարձր վաստակ ապահովող մասնագիտություններին, ապա նշվում են տնտեսագետ, իրավաբան, օտար լեզուներ եւ համակարգչի իմացություններ: Սակայն, նման գիտելիքներ երեխային կարող է տալ ԲՈՒՀ-ը, որը բնակչության ավելի քան 60 %-ը իր երեխայի համար համարում է անմատչելի, դրա համար պահանջվող ծախսերի անմատչելիության պատճառով: ԲՈՒՀ-ում սովորելու եւ մասնագիտական որակավորում ստանալու հնարավորությունը Հայաստանում ունի «լավ» դպրոցներում կենտրոնացված կոնտինգենտը, իսկ

«վատ» դպրոցների պատանեկությունը դատապարտված է մանր առևտրի, գյուղի մենատնտեսական աշխատանքների, էպիզոդիկ ֆիզիկական աշխատանքների, հանցագործության, եզակի եկամտաբեր արհեստների, որոնցից շատերին նույնպես բախտ է վիճակված մնալու էպիզոդիկ վաստակի հույսին:

Նշենք, որ բնակչության իրական (գոյատեւման) մոտեցումը կրթության խնդիրն էլ ցանկալին (մարդ դառնալը) էականորեն տարբերվում են միմյանցից եւ նույնիսկ հակասության մեջ են, արտահայտելով այն հակասությունը, որում հայտնվել է հասարակությունը. մասնագիտական կարողություններին տիրապետող մարդիկ, գիտակցելով իրենց մասնագիտության կարելոթությունը, սակայն հաշտվելով դրա արժեզրկման հետ, ընտրում են գոյատեւում ապահովող մատչելի որեւէ ձեւ: Հոգեբանորեն դա միջին եւ ավագ սերնդի իր արժեքներից հանգամանքների ճնշմամբ ստիպողական հրաժարումն է եւ արժեզրկման գիտակցումը: Գոյատեւման պայքարում ընդունելով իր սերնդի արժեզրկումը, այս սերունդները չեն բարձրացնում իրենց արժեքները եկող սերնդին փոխանցելու բնական պահանջմունքը եւ միեւնույն ժամանակ հրաժարվում են այդ արժեքների փոխանցումը նախկինում իրականացնող օղակի՝ կրթական համակարգի նկատմամբ հոգատարությունից: **Այսինքն, դպրոցի այսօրվա ճգնաժամը սերտորեն կապված է աշխատանքի իմաստավորման, աղքատացման եւ այն միայն որպես «գոյատեւում ապահովող վաստակի միջոց» դերով սահմանափակման հետ ու դրանով պայմանավորված՝ արժեքների փոխանցման խնդիր ունեցող սերնդային խմբերի, սոցիալական խավերի եւ մասնագիտական խմբերի թե հասարակական, թե անհատական մակարդակներում արժեզրկման, աշխատանքի ստեղծագործական եւ հոգեկան գործառույթների անկման հետ:**

Դպրոցի խնդիրներն այսօր լիովին հարմարվել են հասարակության մեջ տարածված եւ իշխող գոյատեւման ձեւերին եւ ռազմավարությանը: Քանակական առումով նույնպես, դպրոցների որակական համամասնությունը համապատասխանում է հասարակության սոցիալական խնդիրներին՝ շուրջ 80% գոյատեւողների խավի, փոքրաթիվ հարուստների եւ 14-15% համեմատաբար միջին շերտի: Ըստ այդմ՝ հարուստների երեխաները իրենց կրթությունը ստանում են սահմանափակ թվով «լավ» դպրոցներում, իսկ անապահովներինը՝ «վատ» դպրոցներում: Միջին խավի երեխաների

ոչ մեծ մասը հաճախում են «լավ» դպրոցներ, իսկ գերակշիռ մասը՝ «վատ» դպրոցների ընտրովի «լավ» դասարաններ: Բացի այդ, հարուստները կամ միջինները դիմում են նաեւ նախընտրելի առարկաների մասնավոր վճարովի ձեւերին:

Այն, որ դեռահասների մեծագույն մասը ստանում է սոցիալապես անապահով խավի խնդիրներին համապատասխան այնպիսի կրթություն, որը չի ապահովելու նրանց մասնագիտական, արտադրական որակյալ ուժի վերածվելու խնդրի լուծումը, նշանակում է, որ ապագայում՝ 40-50 տարի անց, Հայաստանի աշխատունակ տարիքի բնակչությունը չի կարող ապահովել ժամանակակից արտադրական տնտեսության պահանջումները, ինչը բավարարելու համար անհրաժեշտ կլինի մեծ ծախսերի դիմել՝ աշխատուժի վերապրոֆիլավորում եւ որակավորում իրականացնելու համար: Այսինքն, կրթական գործին այսօրվա բարձիթողի մոտեցումը նշանակում է չունենալ եւ չառաջնորդվել Հայաստանում արտադրական տնտեսության հիմքերի ստեղծման ռազմավարությամբ: Մասնագիտական վերապրոֆիլավորման եւ որակավորման իրականացումը կարճ ժամկետներում կարող է հանգեցնել մեկ այլ պրոբլեմի՝ լոկալ ազգային միջավայրում համապատասխան արտադրական կուլտուրայի բացակայության: Դե, ի դեպ, շատ լուրջ խնդիր է արտադրության արդյունավետ կազմակերպման համար, քանի որ միշտ պետք է նկատի ունենալ, որ տնտեսության կազմակերպում Հայաստանում՝ նշանակում է գործ ունենալ մշակույթի եւ հասարակության էթնիկության գործոնի հետ: Այդ պատճառով տնտեսական համագործակցության տեղական առանձնահատկությունները կարիք ունեն ուսումնասիրման եւ կիրարկման՝ սերնդի կրթական եւ դաստիարակչական գործի կազմակերպման մեջ:

Այսօրվա մեր կրթական համակարգը սահմանափակում է անհատի զարգացումը, քանի որ մասնագիտորեն միօրինակ եւ սոցիալապես բեւեռացված հասարակությամբ նրա ադապտացումը նշանակում է, չիրականացնել սերնդափոխությանն ուղեկցող մարդկային կարողությունների ու ունակությունների դիմամիկ վերարտադրություն՝ բավարարվելով պարզ վերարտադրությամբ եւ օտար ներմուծություններով: Սերնդափոխությունը պահանջում է որոշակի փոփոխություններ ու թարմացումներ, եւ եթե մշակույթն ինքը չունի դրա հնարավորությունը, ապա այն ներմուծվում է օտար մշակույթից: Եթե դա տեւական է, եւ յուրացնող մշակույթը չունի դիմամիկ

վերարտադրության ներուժ, այն նախ, կարող է կորցնել իր ինքնուրույնությունը եւ դիմադրողականությունը մշակութային ինտերվենցիայի նկատմամբ ու վերջին հաշվով՝ ինքնությունը: Կրթական համակարգը, չիտապահեղելով անհատի կարողությունների եւ ունակությունների բացահայտման ու զարգացման խնդիրներ, կարող է հակառակ դեր կատարել. արգելակել երեխայի բազմակողմանի զարգացումը՝ սահմանափակելով այն իր համակարգի հնարավորություններով: Եթե ուսուցիչների եւ դպրոցների տնօրենների կարծիքների հիման վրա կատարած մոտավոր հաշվարկներով, դպրոցական երեխաների մեջ օժտված եւ ընդունակները մոտ 12-15% են, նույնքան անընդունակները, մնացած միջին կարողությունների եւ ունակության երեխաները կազմում են 70-80%-ը, ապա հատկապես այդ միջին մասի կողմնորոշումը եւ ռեսուրսների բացահայտումը, հանրօգուտ գործունեության նախապատրաստումը կարելի է համարել կրթական համակարգի խնդիր: Եթե այն արդյունավետ գործող համակարգ է, ապա այդ 70-80%-ի մեծամասնությունը կհարի բարձր զարգացածություն ունեցողներին, իսկ հակառակ դեպքում՝ թույլ զարգացածություն ունեցողներին: Ահա թե որն է մեր կրթական համակարգի վերակառուցման ներկա պրոբլեմը:

Կրթական համակարգի բարենորոգման հաջողությունից է կախված նաեւ Հայաստանի քաղաքական իրավիճակի առողջացման հնարավորությունը: Փաստորեն, երկրի ներքաղաքական կյանքում ծաղկող իռացիոնալ ավտորիտարիզմի իրավիճակը կրթական համակարգը հարմարեցրել է իր արժեքների վերարտադրությանը՝ վերածելով այն փոքրաթիվ «լավ» եւ մեծաթիվ «վատ» դպրոցների ցանցից կազմված համակարգի: Ժողովրդավարական քաղաքական համակարգ ստեղծելու համար չափազանց կարեւոր է ժողովրդավարական արժեքներ ու պրոֆեսիոնալ կարողություններ կրող եւ վերարտադրող սերունդ դաստիարակելը, որին էլ պետք է ուղղված լինի կրթական համակարգի բարենորոգումների սկզբունքների ընտրությունը:

Հայաստանյան «լավ» դպրոցների գործառույթը վեր է ածվում կամ գիտելիքների որոշակի աստիճան կրող պոտենցիալ արտագաղթողներ եւ իռացիոնալ հեղինակություններ պատրաստելուն, կամ «վատ» դպրոցներին դրանց արժեքներին ենթարկված եւ հնազանդ ապրող զանգվածի դաստիարակության: Սա հասարակական տեսանկյունից դեստրուկտիվ երեւույթ է այն առումով, որ ոչ միայն թույլ է տալիս իռացիոնալ ինսուլսնե-

րի գերիշխանություն, այլ անօգնականության է մղում այն շերտերին, որոնք կարող էին հակադրվել իռացիոնալիզմի տարածմանը: Կրթական նման նեղ խնդիրներ իրականացնող համակարգը չի ապահովում նաեւ այն շերտերի եւ խմբերի ակտիվացումը, որոնք ոչ օրգանական հասարակության քաղաքական կյանքում պասիվ դեր են կրում: Բացի այդ, այն խաթարում է նաեւ հասարակության անդամների փոխկապվածությունը եւ համակեցությունը, որը նպաստում է գործունեության տարբեր ոլորտների ներդաշնակմանը: Հասարակական քաղաքական ընդունակության (պոտենցիալ) բարձրացումը կոչվում է «հասարակության ֆունդամենտալ դեմոկրատացում»:

Դպրոցների 95%-ի վերածումը պատանեկության կրթումը եւ դաստիարակումը աղավաղող համակարգի, նպաստում է իր առջեւ ծառայած պրոբլեմների լուծմանն անընդունակ եւ «հեղինակության» օգնության կարիքը զգացող զանգվածի դաստիարակության, որը ժամանակի ընթացքում փոխվում է նաեւ մտքի եւ գիտելիքի նկատմամբ հակակրանքի (ինչի արտահայտությունը արդեն իսկ առկա է մեր դպրոցներում սովորող եւ կիրթ երեխաների նկատմամբ կիրառվող ծաղրանքի եւ ճնշումների ձեւով):

Անշուշտ, ներկայիս կրթական համակարգը անչափ հեռու է հասարակության դեմոկրատացմանը եւ մշակութային առաջընթացին նպաստող լինելուց, եւ այդ առումով մեր առջեւ ծառայած հիմնախնդիրը կրթական համակարգի դեմոկրատացումն է, ինչը նշանակում է դաստիարակել անհատի մեջ սոցիալական բնավորության այնպիսի գծեր, որոնք մարդու մեջ ուժեղացնում են պրոդուկտիվ կողմնորոշումը, այսինքն՝ սոցիալական բնավորության այն տիպը, որը նպատակամղված է սեփական ստեղծագործ կարողությունների իրացմանն այնպես, որ այդ գործընթացում մարդն իրեն զգում է թե գործունեության լիարժեք սուբյեկտ, թե ներքնապես միասնական եւ համերաշխ շրջապատի հետ:

Մենք հիմնական ուշադրությունը կենտրոնացրինք դպրոցական կրթության հիմնախնդիրներին այն պատճառով, որ ինչպես ցույց են տալիս դիտարկումները, բուհական համակարգի սոցիալական խնդիրները նախ՝ շատ առումներով անանցվում են դպրոցականից, երկրորդ՝ ընդհանրական են դրա հետ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ուսանողության ավելի քան 65 %-ը ապահովված ընտանիքներից են, մոտ 30 %-ը՝ ոչ կարիքավոր եւ մոտ 5%-ը՝ կարիքավոր ընտանիքներից: Ի դեպ, առկա են սո-

ցիալական դրդապատճառներով ուսումը թողնելու դեպքեր: Հիմնական պատճառը վճարովի բաժիններում ուսման վարձի անվճարունակությունն է, ավելի հազվադեպ ընտանիքի ծայր աստիճան դժվար վիճակը: Կարիքավոր ուսանողների գերակշիռ մասը վաստակում է տարբեր աշխատանքների դիմելու միջոցով, հիմնականում առեւտրի, դասերից հետո կամ անհրաժեշտության դեպքում նաեւ դասերի հաշվին վաստակելով: Նման զբաղմունքներ ունեն նաեւ ոչ կարիքավորների 28-30%-ը: Ապահովված եւ հատկապես ունեւոր ընտանիքի ուսանողների մեջ նույնպես կան այնպիսիները, որոնք ունեն իրենց աշխատանքը, ինչը կապված է ոչ մանր, գլխավորապես խոշոր կամ միջին առեւտրի հետ: Նման ուսանողները հաճախ բացակայում են, իսկ կիսամյակի եւ ավարտական քննություններին դրական գնահատականներ ստանում դասախոսներին կաշառելու միջոցով: Ի դեպ, դասախոսներին կաշառելու պրակտիկան բավականին տարածված երեւոյթ է եւ կաշառքի չափերը մեկ կիսամյակային քննության դիմաց տատանվում են միջինը 20-150 ԱՄՆ դոլարի սահմաններում: Պրեստիժային ԲՈՒՀ-երում եւ ֆակուլտետներում այդ թիվն ավելի մեծ է:

Կարիքավոր ուսանողների ամսական միջին ծախսերը ամենասեղմված հաշվարկների դեպքում 12000-15000 դրամի սահմաններում են, իսկ ոչ կարիքավորներինը՝ 30000-ից ավել: Հիմնականում այս պատճառներով խիստ կրճատվել է հատկապես միջին եւ հեռավոր մարզերից մայրաքաղաքում սովորող ուսանողության թիվը: Դրանց գումարվում է նաեւ Երեւանում բնակության պրոբլեմը, քանի որ հանրակացարաններում չափազանց անբարենպաստ ֆիզիկական եւ սոցիալ-հոգեբանական պայմաններ են, իսկ վարձով բնակարանը (Երեւանում ամենացածր վարձը 30-40 ԱՄՆ դոլար է)՝ շատերի համար անմատչելի:

Կրթության հետ կապված ծախսերը հիմնականում հոգում են ուսանողների ընտանիքները, որոնք անհրաժեշտ գումարի բացակայության դեպքում հաճախ վաճառում են տան ունեցվածքը կամ դիմում պարտքերի (երբեմն նաեւ տոկոսով): Դիտարկումները ցույց են տալիս, որ սոցիալապես ապահով ուսանողությունը մեծ թիվ է կազմում իրավաբանական, տնտեսագիտական, միջազգային հարաբերություններ, բժշկական, օտար լեզուների մասնագիտացմամբ ֆակուլտետներում կամ ԲՈՒՀ-երում, իսկ առավել անապահովը՝ տեխնիկական եւ ճշգրիտ գիտությունների մասնագիտացմամբ: Ուսանողության 65%-ը ԲՈՒՀ ընդունվելու դրդապատճառ է հա-

մարել մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու հանգամանքը, 20%-ը պարզապես ցանկացել է ունենալ բարձրագույն կրթություն, 9%-ը հետեւել է ծնողների օրինակին: Ուսանողները հիմնականում ձգտում են ունենալ այնպիսի մասնագիտություն, որոնք համարվում են «հեղինակավոր» եւ ԲՈՒՅ-երում ունեն բարձր մրցակցություն: Հարցման մասնակցած ուսանողների 48%-ը իր մասնագիտությամբ աշխատանք գտնելու հույս չունի: Նրանց 42%-ը գտնում է, որ մասնավոր ԲՈՒՅ-երը հիմնավոր գիտելիքներ չեն տալիս, իսկ 34%-ը նշված պատճառով դեմ է արտահայտվել վճարովի ուսուցման համակարգին: Ընդհանրապես, դիտարկումները ցույց են տալիս, որ «ապագա ունեցող մասնագիտություններ» հիմնականում ստանում են ապահովված ընտանիքների երեխաները, որոնք ավարտում են մայրաքաղաքի կենտրոնական «պրեստիժային» դպրոցները: Ինչպես երևում է դպրոցական եւ ԲՈՒՅ-ական համակարգերի սոցիալական իրավիճակների վերլուծությունից, կարելի է վստահորեն ասել, որ կրթությունը Հայաստանում գնալով ստանում է սոցիալական երանգավորում, ինչը հանգեցնում է հանրապետության երիտասարդության ներուժի բացահայտման եւ օգտագործման հնարավորությունների խիստ սահմանափակման:

Մեկ այլ լուրջ պրոբլեմ է կրթական համակարգի կադրային ապահովածության խնդիրը, որի ձեւավորած բարդությունների մասին խոսվել է նախորդ բաժնում: Խոսքը վերաբերում է ԲՈՒՅ-ական կրթության որակի անկման պրոբլեմին, որը կապված է դասախոսական կազմի վերարտադրությունը որակյալ երիտասարդական մասնագետների հաշվին կազմակերպելու բարդությունների հետ: Սա ժամանակակից կրթություն ստանալու ձգտում ունեցող երիտասարդությանը ստիպում է ելքեր փնտրել արտասահմանում կրթություն ստանալու համար, որն իր հերթին նպաստում է մասնագիտական որակավորում ունեցող երիտասարդների արտահոսքին:

Ընդհանրացնելով, կարելի է նշել այն հիմնական սկզբունքները, որոնք պետք է առաջնորդեն կրթական համակարգի բարեփոխման գործը: Դրանք համապատասխանում են վերը նշված խնդիրներին՝ ստեղծել միջազգային քաղաքակրթության արժեքները կրող, դրանց վերարտադրությանը կարող եւ դրանք ազգային-հասարակական զարգացման խնդիրների շրջանակներում կիրառելու ունակություն եւ հատկություն ունեցող նոր սերունդ: Դրա համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի կրթական համակարգ, որ կրթության պրոցեսում երեխաներին հաղորդվեն համաշխարհա-

յին գիտական, մասնագիտական եւ մշակութային նվաճումները, իսկ կրթությանն ուղեկցող դաստիարակության պրոցեսում իրականացվի ազգային-հասարակական այն ստերեոտիպերի արմատավորումը, որոնք նախ, պահպանելով էթնիկ ինքնագիտակցության եւ մշակութային ինքնության առանձնահատկությունները, թույլ կտան քաղաքակրթության արժեքները ծառայեցնել սեփական առաջընթացին, երկրորդ, սեփական արժեքներն ընդունելի եւ հաղորդակցվելի դարձնել համաշխարհային քաղաքակրթության համար: Այսօրվա կոնունիկացիոն իրավիճակի ինտենսիվության պայմաններում միայն սեփական արժեքների բարձրացումը համաշխարհային մակարդակի, թույլ կտա զարգանալ, ինտեգրվել համաշխարհային հանրությանը՝ պահպանելով մշակութային ինքնությունը: Դրա համար անհրաժեշտ է, որ սեփական խնդիրների ուսումնասիրության նախաձեռնությունը իր վրա վերցնի պետական-հասարակական կառույցը կամ գոնե, հայ հանրույթը: Դա հնարավորություն կտա կանխել ազգային-հասարակական արժեքներից դեռահաս սերնդի օրըստօրե խորացող օտարումը եւ արեւմտյան արժեքների մակերեսային-ձեւական ընդօրինակումը, վերափոխելով այն, ըստ էության, յուրացման:

Այսպիսով, թվում է, թե աղքատության եւ կրթության հիմնախնդիրները «հավի եւ ձվի» պատմության սկզբունքով կապված երեւույթներ են եւ աղքատ հասարակության ու պետության մեջ բնական պետք է համարել կրթական անորակ եւ թույլ համակարգի ձեւավորումը: Սակայն, այս կարծիքը միանգամից ի չիք է դառնում, երբ նպատակը զարգացումն է, իսկ աղքատության հաղթահարումը դիտվում է զարգացման խնդիրների համատեքստում: Այս դեպքում, աղքատության հաղթահարման գործում կրթության խնդիրը ստանում է առանցքային գործոնի նշանակություն, քանի որ միայն բարձր որակավորմամբ մասնագետների շնորհիվ է հնարավոր ապահովել ժամանակակից աշխարհում մրցունակ տնտեսության եւ պետության ձեւավորում: Ուստի, կրթական համակարգի որակի բարձրացումը եւ այնտեղ լուրջ ներդրումների կատարումը կարող է ռազմավարական դեր խաղալ աղքատության հաղթահարման եւ պետականության զարգացման տեսանկյունից:

#### 4. Եզրակացություններ աղքատության հաղթահարման եւ պետության զարգացման հիմնախնդրի առանցքային սկզբունքների շուրջ

Այսպիսով, աղքատության առանձնահատկությունը Չայաստանում այն է, որ

- ունի հասարակական լայն տարածվածություն եւ վեր է ածվել համատարած երեւոյթի,
- բնակչության հիմնական մասի մոտ արտահայտված է գոյատեւման պահանջունքների լուծման թույլ կարողություններ,
- անդրադառնում է բնակչության մեծամասնության վերարտադրողական կարողությունների թուլացմանը եւ ձեւավորում մարդկային ու նյութական կարողությունների շարժընթաց վերարտադրման անկարողություն,
- բնակչության վերարտադրողական կարողությունների շարժընթացության անկման պատճառով աղքատությունը միտված է վեր ածվելու ինքնավերարտադրող երեւոյթի, քանի որ արտագաղթի հետեւանքով երկրից հեռացողների մեջ մեծ թիվ է կազմում բնակչության հենց այն զանգվածը, որն ուներ կրթական եւ մասնագիտական միջինից բարձր կարողություններ: Իսկ ցածր կարողություններով օժտված մարդկային ներուժը ավելի թույլ հնարավորություններ է ցուցաբերում ինքնուրույն հաղթահարելու աղքատությունը եւ կանխելու դրա պարբերական ինքնավերարտադրությունը,
- բացի տնտեսական պատճառներից, աղքատությունն ունի առավելապես հասարակական-քաղաքական պատճառներ, քանի որ աղքատները հասարակության այն խավերն են, որոնք օտարված են քաղաքական կառավարման գործընթացներից եւ հատկապես գրկված՝ բաշխման ու վերաբաշխման ոլորտների վճիռների կայացմանը ոչ միայն մասնակցությունից, այլև իրազեկվածության հնարավորություններից: Այսինքն՝ աղքատությունը հասարակություն-իշխանություններ բացակայության աստիճանի հասնող թույլ հետադարձ կապի հետեւանք է,
- նշվածը ձեւավորում է նաեւ մեկ այլ առանձնահատկություն, խոսքը՝ հասարակության մեջ իշխանության հետ կապերի մատչելիությամբ օժտված «արտոնյալների» եւ դրա մատչելիությունից զուկ «ոչ արտոնյալներ»

րի» խավերի ձեւավորման մասին է,

- վերջինս ձեւավորում է նաեւ տարբեր խավերին պատկանող մարդկանց գործելու, ինքնադրսեւորվելու հնարավորությունների անհավասարության իրավիճակ, երբ «ոչ արտոնյալ» խավերը չեն կարողանում մրցակցել եւ դիմադրել «արտոնյալ» խավերի ներկայացուցիչներին գործունեության բոլոր ոլորտներում այն պատճառով, որ արտոնյալները վայելում են իշխանության այս կամ այն շրջանակի հովանավորությունը եւ դրանով իսկ կարողանում իրենց համար անցանկալի պահերին անօրինական կամ օրինական ճնշումների միջոցով հաղթող դուրս գալ,
- աղքատությունն աչքի է ընկնում նաեւ օրենքի մատչելիության թույլ հատկանիշներով, քանի որ օրենքը, ինչպես ժողովուրդն է ասում, անհրաժեշտության դեպքում աշխատում է «արտոնյալների» օգտին: Այս առիթով ժողովրդի մեջ դատաիրավական համակարգի վերաբերյալ տարածված է մի ասույթ՝ «շուրջ շան թաթը չի կծի», որում արտահայտված է դատաիրավական համակարգի կողմից օրենքի հավասար մատչելիության եւ օրենքի առջեւ բոլորի հավասարության սկզբունքի նկատմամբ մարդկանց խոր անհավատությունը,
- գոյատեւողների կամ աղքատների քաղաքական կառավարման համակարգի նկատմամբ մատչելիության եւ դրանից հետեւող գործունեության բոլոր ոլորտներում «ոչ արտոնյալ» կարգավիճակը բավականին թուլացրել է տնտեսական հարաբերություններում նրանց դերակատարության հնարավորությունները, ինչը տնտեսական աճի ձեւավորման հիմնական դերակատարներ է դարձրել խոշոր բիզնեսով զբաղվող «արտոնյալների» խավին: Սա նշանակում է, որ տնտեսական աճը եկամտների վերաբաշխման ներկայիս անկատար մեխանիզմների պայմաններում ոչ թե նպաստելու է երկրում աղքատության հաղթահարմանը, այլ արդեն հարուստների կարողությունների բազմապատկմանը եւ սոցիալական բեւեռացման հետագա խորացմանը,
- վերջապես ամենից մտահոգիչ առանձնահատկությունն այն է, որ գոյատեւման ռազմավարությունը, բնորոշ դառնալով ընտանիքների մեծամասնությանը, դառնում է հասարակության առօրյա իրավիճակ, որի նկատմամբ դիմադրողականության բացակայությունը սկսում է բնորոշ հատկանիշ դառնալ ողջ բնակչության համար: «Յուրա գնալու» վիճակից գոհությունը, բնակչությանը դատապարտում է այդ վիճակի հարատեւության: «Յուրա գնալը» կամ գոյատեւելը, թույլ են տալիս հիմնականում բա-



վարարվել առաջնային՝ սննդի, հագուստի եւ ջեռուցման պահանջումներին միջին բավարարման կարողություններով, եւ կարողությունների զարգացման խնդիրը հասարակության մեջ որպես պահանջում կամ չի գիտակցվում, կամ գտնվում է գիտակցության ցածր մակարդակում:

Այսինքն՝ պետք է եզրակացնել, որ պետականության զարգացման ծիրում աղքատության հաղթահարման հիմնախնդրի լուծումը բնակչության վերարտադրական կարողությունների համար հնարավորությունների դաշտի եւ վերարտադրության շարժընթացության ձեւավորումն է: Այս առումով խնդիրները գտնվում են մի քանի հարթության վրա՝ քաղաքական, տնտեսական, կրթական, հասարակական: Նկատենք, որ դրանցում դոմինանտ դիրք են գրավում հասարակական հարթությունում գտվող խնդիրները, քանի որ դրանք են հիմնականում ապահովում հասարակության զարգացումը եւ վերարտադրությունը, սակայն մնացած երեքը իրականացնում են առանցքային նախապայմանների դերը:

Հետեւաբար քաղաքական, տնտեսական եւ կրթական ոլորտներում աղքատության հաղթահարմանն ուղղված խնդիրների պարզաբանումը պետք է կատարվի հասարակության վերարտադրողական կարողությունների ձեւավորման եւ իրացման սկզբունքի որդեգրման տեսանկյունից: Այս դիրքորոշման դեպքում, կարելի է նշված ոլորտներում առանձնացնել հիմնական խնդիրները եւ սկզբունքային մոտեցումները:

**Քաղաքական ոլորտ:** Քաղաքական ոլորտի հիմնախնդիրները հետեւյալներն են՝

- բնակչության բոլոր խավերի համար կարողությունների բացահայտման, զարգացման եւ իրացման հավասար հնարավորությունների ձեւավորում,

- դրա համար անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ, որոնք կնպաստեն իշխանությունից հասարակության օտարվածության ներկայիս վիճակը հաղթահարելուն եւ կնպաստեն իշխանության հասարակական մատչելիության ձեւավորմանը,

- այս նպատակով անհրաժեշտ է, որպեսզի իշխանությունները քաղաքական կամ քաղաքական ցուցաբերեն եւ նպաստեն հասարակության համար իշխանության մատչելիություն իրականացնող դերակատարների՝ մասնավորապես քաղաքական ուժերի կայացմանը եւ նրանց կողմից հասարակական գործառույթների ստանձնմանը,

- իշխանությունից հասարակության օտարվածության հաղթահարման մեկ այլ կարեւոր պայման է կառավարման գործին հասարակության մասնակցության ձեւավորումը, որի հիմնական դերակատարներն են ոչ կառավարական կազմակերպությունները: Ներկայումս կառավարման ոլորտում կայացվող որոշումների հիմնական մասը կայացվում է իշխանության այս կամ այն ոլորտում մեխանիկական հովանավորչություն վայելող տարբեր աստիճանի «արտոնյալություն» ունեցող խավերի պատվերի հիման վրա: Եթե մեծացվի իշխանության մատչելիության շրջանակները եւ որոշումների ու վճիռների կայացման գործընթացի վրա հասարակության բոլոր խավերի համար ստեղծվեն հավասար պայմաններ, ապա կառավարման օղակում կստացվեն ողջ հասարակության պահանջումները արտացոլող պատվերներ, եւ կառավարումը հնարավոր կլինի իրականացնել ողջ հասարակության շահերի արտացոլման հիման վրա: Իսկ սա նշանակում է, որ հասարակության մեջ կդադարեն լինել արտոնյալներ ու ոչ արտոնյալներ, հետեւաբար եւ պետությունը կընկալվի որպես մի կողմից՝ ողջ հասարակության շահերին նպատակաուղղված ինստիտուտ եւ մյուս կողմից՝ դա կնպաստի ոչ միայն արտոնյալ խավերի վերարտադրողական կարողությունների ընդլայնմանը, այլ ողջ հասարակության,

- ձեւավորել օրենքի իշխանություն՝ հենված օրենքի առջեւ բոլորի հավասարության եւ օրենքի արտոնյալ մատչելիության բացառման սկզբունքների վրա,

- խրախուսել հասարակության քաղաքացիական պասիվ վարք ունեցող խմբերի ու խավերի ակտիվությանը նպաստող քաղաքացիական մշակույթի զարգացման եւ քաղաքացիական գիտակցության բարձրացմանն ուղղված միջոցառումները: Պետականորեն նախաձեռնել քաղաքացիական անգրագիտության բարձրացման միջոցառումներ,

- քաղաքական ոլորտում միջոցառումների վերջնական նպատակը պետք է լինի գոյատևման խմբերի ներգրավումը իշխանության ձեւավորման եւ կառավարման հասարակական մասնակցության ոլորտ, այդ ճանապարհով բացառելով աղքատության հիմնական պատճառներից մեկի՝ «արտոնյալ» եւ «ոչ արտոնյալ» դասերի ձեւավորման հնարավորությունները:

**Տնտեսական ոլորտ:** Տնտեսական ոլորտում հիմնական խնդիրներն են՝

- տնտեսական աճի շարժընթացության ապահովումը,

- տնտեսական աճի ձեւավորման գործում մանր եւ միջին բիզնեսի հաշվին դերակատարների թվի ընդլայնման ամենամպաստավոր պայմանների ձեւավորումը,

- տնտեսական հարաբերություններում դերակատարների թվի ընդլայնմանն ուղղված պայմանների ու մեխանիզմների ձեւավորումը,

- տնտեսական դաշտում դերակատարության ձգտող յուրաքանչյուրի համար օրենքով երաշխավորված գործուն մեխանիզմների հիմքի վրա գործող հավասար մրցակցային դաշտի ապահովում

- բարձր մասնագիտական ունակությունների ու կարողությունների (զլխավորապես ինտելեկտուալ) պահանջարկ ներկայացնող շուկայի ձեւավորմանն ուղղված տնտեսական ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմանների ձեւավորում

- մասնագիտական միօրինակություն ձեւավորող ներկայիս տնտեսական գործունեության ձեւերից մասնագիտական բազմազանություն ձեւավորող տնտեսական գործունեության ձեւերի անցման ծրագրավորում եւ կիրառում,

- գիտական նորույթների հիմքի վրա գործող տնտեսական ճյուղերի զարգացման համար առանձնակի նպաստավոր պայմանների ձեւավորում. օրինակ, բարձր տեխնոլոգիաներ, բիոինժեներիա եւ այլն,

- տնտեսական գործունեության դաշտում «միջնադարյան» բարեկամաընկերախնամիական եւ կլանային բնույթի հովանավորչական տանիքների դեմ պայքարի ձեւավորում,

- տնտեսական կառավարման այնպիսի մեխանիզմների կիրառում, որոնք հնարավորություն կտան տնտեսական կյանքում գերիշխելու տնտեսական օրենքներին, այլ ոչ թե կլանային բնույթ ունեցող մեխանիկական կապերին:

**Կրթական ոլորտ:**

- մեխանիզմների կիրառում, որոնք կնպաստեն նախադպրոցական եւ միջնակարգ կրթության ոլորտում համապատասխան տարիքի ներգրավվածության մեծացմանը,

- մեխանիզմների կիրառում, որոնք կնպաստեն նախադպրոցական եւ միջնակարգ ոլորտում ոչ միայն օժտված, այլ նաեւ միջին կարողությունների տեր անհատների ունակությունների զարգացմանը,

- մեխանիզմների կիրառում, որոնք կնպաստեն նախադպրոցական եւ

միջնակարգ կրթության ոլորտի որակի բարձրացմանը եւ որակյալ կադրերի ներգրավմանը,

- մարզերում եւ Երեւանի արվարձանային շրջաններում որակյալ կրթություն ստանալու հնարավորությունների հավասարեցում եւ կենտրոն – ծայրամաս խտրականության վերացում,

- ԲՈՒՅ-ական համակարգի մատչելիության բարձրացում բնակչության բոլոր խավերի համար,

- մարզային բնակչության եւ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար ԲՈՒՅ-ական կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնում եւ որակյալ կրթություն ստանալու հավասար հնարավորությունների ձեւավորում,

- ԲՈՒՅ-ական համակարգ երիտասարդ որակյալ կադրերի ներգրավման համար նյութական եւ պրեստիժային հիմքերի ձեւավորմանն ուղղված միջոցառումների նախաձեռնում,

- գիտության եւ կրթության մերձեցմանն ուղղված քաղաքականության իրականացում,

- ԲՈՒՅ-երում կրթական խորհրդային մեթոդների փոխարինում ժամանակակից այնպիսի մեթոդներով, որոնք նպաստում են կարողությունների զարգացմանը, ինչպես դասախոսական կազմում, այնպես էլ ուսանողների միջավայրում,

- կրթական հիմնարկների եւ այնտեղ ներգրավված մասնագետների կարգավիճակի բարձրացմանն ուղղված պետական քաղաքականության իրականացում,

- կրթական համակարգում կաշառակերության դեմ արմատական քայլերի ձեռնարկում, կրթական համակարգի ֆինանսավորման եւ ֆինանսական գործունեության թափանցիկության մեծացում,

- կրթական համակարգի ոչ պետական ֆինանսավորմանը նպաստող օրենսդրության եւ մեխանիզմների ձեւավորում,

- կրթական համակարգի նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետ մեխանիզմների ձեւավորում,

- հասարակության զարգացման խնդիրներում կրթական համակարգին առանցքային դերակատարություն ստանձնելու մեխանիզմների ձեւավորում ու քաղաքականության որդեգրում:

Ամփոփելով, կցանկանայինք մեկ անգամ եւս հստակեցնել աղքատության հիմնահարցի նկատմամբ հիմնական դիրքորոշումը: Համաձայնվե-

լով տարբեր բնորոշումների հետ, որոնք իրենց արտահայտությունն են, ի դեպ, գտել նաև ՀՀ կառավարությունում անկախ փորձագետների խմբի կողմից մշակվող «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում»<sup>13</sup>, նշենք, սակայն, որ առանցքայինը աղքատություն երեւոյթի բնորոշման մեջ, վերաբերում է մարդկային ունակությունների եւ նյութական կարողությունների վերարտադրման շարժընթացության ապահովման հնարավորությունների բացակայության խնդրի արտացոլմանը: Այդ պատճառով էլ աղքատության հաղթահարման ռազմավարական նպատակը պետք է համարվի մարդկային ունակությունների շարժընթաց վերարտադրության հավասար հնարավորությունների ձեւավորումը հասարակության մեջ: Միայն մարդկային ունակությունների դեպքում է հնարավոր, որ անհատը, ընտանիքը եւ հասարակությունը սեփական ուժերով թոթափեն աղքատությունը, քանի որ աղքատության հաղթահարում հնարավոր է միայն այն հասարակության մեջ, որն ունի զարգանալու ներուժ: Հակառակ դեպքում հնարավոր է իրագործել աղքատությունը մեղմելուն ուղղված կոսմետիկ միջոցառումներ: Այսինքն՝ աղքատության հաղթահարման խնդիրը մարդու ունակությունների ու կարողությունների բացահայտման, զարգացման եւ իրացման հնարավորությունների խնդիր է: Մի հարցադրում, որը, որպես առանցքային խնդիր, բացակայում է ԱՀՌԾ-ում եւ որի պատճառով, կարծում ենք, որ այն բոլոր հույսերը, որոնք կապվում են տնտեսական աճի միջոցով աղքատության հաղթահարման հետ, դատապարտված են անհաջողության, քանի որ իրական առաջընթաց ապահովող տնտեսական աճ հնարավոր է ունենալ զարգացած մարդկային ներուժի առկայության դեպքում, որը առաջնային պայման է կայուն տնտեսական աճ ապահովող զարգացած տնտեսություն ունենալու համար: Այսինքն՝ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է երկու հիմնական պայման. զարգացած մարդկային ռեսուրսներ եւ քանակական տեսանկյունից դրանց գործելու այնպիսի հնարավորություններ, որը թույլ կտա հնարավորինս մեծ ներգրավվածություն զարգացմանն առնչվող ոլորտներ, այդ թվում եւ որպես առանցքային՝ տնտեսական ոլորտ: Նշված երկու պայմաններից մեկի՝ զարգացած մարդկային ռեսուրսների, ձեւա-

վորման դաշտը կրթական համակարգն է, իսկ երկրորդի՝ քանակական տեսանկյունից զարգացում ապահովող ակտիվության ոլորտներ հնարավորինս մեծ ներգրավվածության ապահովման դաշտը, քաղաքական կառավարման համակարգն է: Ուստի պատահական չէ, որ այս հետազոտության մեջ սոցիալ-տնտեսական խնդիրները դիտվում են որպես ածանցյալ՝ հասարակական-քաղաքականին ու կրթականին:

<sup>13</sup>. Տես՝ «Հայացք տնտեսությանը», ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների վերլուծական – տեղեկատվական կենտրոնի տեղեկագիր, 2002 թ. թիվ 12:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն .....	3
1. Աղքատության պատճառները, բնույթը եւ առանձնահատկությունները Հայաստանում .....	7
2. Աղքատության հաղթահարման հասարակական-քաղաքական տեսանկյունները եւ պետականության զարգացման փոխկապվածությունը .....	20
3. Աղքատության եւ կրթական, մշակութային խնդիրների փոխազդեցությունը .....	43
4. Եզրակացություններ աղքատության հաղթահարման եւ պետության զարգացման հիմնախնդրի առանցքային սկզբունքների շուրջ.....	62

## «ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ժամանակակից աշխարհում սեփական ներուժի առավելագույն կենտրոնացումը, տարածաշրջանային և համաշխարհային հավասարակշռության համակարգերում կուտակված էներգիայի ռացիոնալ և նպատակային կիրառումը դառնում են ազգերի և պետությունների առջև ծառայած կենսական հիմնահարցեր:

Հայաստանն այսօր միջազգային ասպարեզում մրցունակ չէ բնական ռեսուրսների, տնտեսական ընդհանուր վիճակի, ֆինանսական համադրված կարողականության չափորոշիչներով: Փոխարենը հայկական գործոնն ուշագրավ և շահավետ դիրք է գրավում մտավոր ներուժի կարողականության կուտակման իմաստով: Մտավոր ներուժի կուտակման և ռացիոնալ կիրառման հիմնահարցը բանալի է հայ ժողովրդի՝ ժամանակակից աշխարհում սեփական ամբողջական ներուժի գնահատման, տեղի ու դերի, հնարավորությունների հստակեցման համար: Համահայկական կազմակերպված մտավոր ներուժը կոչված է դառնալու այն հզոր լծակը, որը Հայաստանին հնարավորություն կտա տեղ գրավել համաշխարհային գործընթացների վրա ազդելու կարողականություն ունեցող երկրների թվում:

Այսպիսով անհրաժեշտություն է դառնում հայկական շարունակականության մոդելի մշակումը, որը հայ ժողովրդի ամբողջական պոտենցիալի պահպանման ու զարգացման ծրագիրն է և իր առանձին բաղադրիչներով օրգանապես շաղկապված ամբողջություն է: Իրավիճակը և առաջիկա զարգացումների հրամայականն առաջնահերթ են դարձնում հիշյալ հիմնահարցը իրականացնելու կոչված, սկզբունքային առումով որակապես նոր միավորի ստեղծման անհրաժեշտությունը: Այդպիսին կարող է դառնալ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը, որն իրենից ներկայացնելու է գիտական, մշակութային, հոգևոր ներուժի կազմակերպման, համադրման, կառավարման և գործնական կիրառման մեխանիզմների մշակման կենտրոն:

Համաշխարհային փորձն ունի մանասոիպ կառույցների արդյունավետ աշխատանքի բազմաթիվ օրինակներ: Քաղաքակրթական մրցակցության

արդի փուլ զարգացած շատ երկրներ (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԳՖՀ, ճապոնիա, Իրան, Չինաստան) թևակոխում են տասնամյակների, երբեմն հարյուրամյակների պատմություն ունեցող այդպիսի հաստատություններով: Այս կենտրոնների վրա են դրվում պետության մտավոր ներուժի կազմակերպման, նորագույն գիտական մշակումների օգտագործման, գիտական կառավարման տեխնոլոգիաների մշակման, պետական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում դրանց կիրառմամբ, կադրերի պատրաստման և վերապատրաստման գործառույթները:

Այսպիսի հաստատությունների ձևավորման և արդյունավետ գործունեության հարուստ փորձ ունի նաև հայ ժողովուրդը: Պատմական շրջադարձային փուլերում, երբ առավել ցայտուն, երբեմն ավերիչ էին դրսևորվում քաղաքակրթությունների շփման և փոխազդեցությունների գործընթացները, ի հայտ եկան Նորավանքի, Սանահինի, Գլաձորի, Տաթևի, Սսի համալսարանները՝ որպես մտավոր ներուժի պահպանման, հոգևոր և մշակութային արժեքների հավաքման, կուտակման և վերարտադրման ազգային գեներալի հետագա զարգացումն ապահովող կենտրոններ:

Հիմնադրամի հիմնական առաքելությունն է լինելու դառնալ այն փորձարարական կենտրոնը, որտեղից հայ իրականության ամենատարբեր ոլորտներ պետք է ձգվեն հայոց շարունակականությունն ապահովող ծրագրերն ու դրանց իրականացման մեխանիզմները: Այն միաժամանակ վեր է ածվելու միջազգային գիտահետազոտական և մտավոր կենտրոնի, որն ունակ կլինի արժանիորեն ներկայացնել մեր ժողովրդին համաշխարհային հանրությանը, դառնալով քաղաքակրթությունների լավագույն ձեռքբերումների համադրման և երկխոսության վայր:

Համալսարանի դասախոսներն ու սաները միջնադարի հայ ուսուցչապետերի օրինակով կդառնան հայկական ազգային նոր դպրոցի հիմնադիրներ, որոնք անկախ պետականության պայմաններում կլուծեն գլոբալ ներազդեցություններով թելադրված նոր խնդիրներ և առաջադրանքներ:

### **ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՌԻՅԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԸ**

Հիմնադրամն իրականացնելու է հետևյալ հիմնական գործառույթները.

- գիտական մտքի համախմբում,
- գիտահետազոտական գործունեություն,

- ռազմավարական հետազոտությունների իրականացում,
- մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կրթամեթոդական նոր մեխանիզմների մշակում և տարածում, տեղեկատվական ցանցի ստեղծում:

#### **ա) Գիտական մտքի համախմբումը ներառում է հետևյալ խնդիրները՝**

- համապատասխան մթնոլորտի ձևավորում, հանրապետության և արտերկրի առաջատար մտավորականների համախմբում, գիտական նորագույն մշակումների փոխանակում,
- գիտական կոնֆերանսներ, խորհրդակցություններ, քննարկումներ,
- գիտա-քաղաքական հետազոտություններ:

#### **բ) Գիտահետազոտական հայեցակարգային աշխատանքներ՝**

- պետության նպատակների և իրական հնարավորությունների գնահատում, զարգացման մոդելների ձևավորում,
- գործադաշտերի և գործամիջոցների հստակեցում,
- հայ ժողովրդի մարդկային, նյութական և հոգևոր կարողության «գույքագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր (մշակութային, քաղաքակրթական),
- հասարակության միասնության մոդելի կառուցում, որի հիմքում կընկնեն տարբեր գաղափարական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային ուղղվածություն ունեցող միավորների գործունեության համակարգումը և հասարակական համաձայնության առկա հիմնախնդիրների հստակեցումը,
- հետազոտությունների արդյունքների կիրառման մեխանիզմների ճշտում,
- կոնկրետ արդյունքների գործադրման առաջարկությունների ներկայացում:

#### **գ) Ռազմավարական հետազոտությունների իրականացում՝**

- ռազմավարության և առաջնահերթությունների ճշտում,
- կոնկրետ նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում,
- տարբեր ոլորտներում գործող ծրագրերի և նրանց գործադրման ժամանակացույցերի համադրման մեխանիզմների ձևավորում,
- մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և դա-

սակարգում,

- յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի կազմում և գործունեության մեխանիզմների ճշգրտում,

- պետական անվտանգության բոլոր չափումներից բխող հատուկ ծրագրերի մշակում, վերջինիս արդյունքում պետական պատվերի մշակում և իրականացման մեխանիզմների ճշգրտում,

- պետական կառավարման օպտիմալ համակարգերի մոդելավորում:

### **դ) Կրթամեթոդական աշխատանքներ և տեղեկատվական ցանցի ստեղծում**

- հիմնադրամի իրականացրած հետազոտությունների հիման վրա մեթոդաբանական աշխատանքների իրականացում,

- դասախոսների և ուսանողների վարժանքի (training) ծրագրերի իրականացում,

- կրթական նոր մեխանիզմների մշակում և տարածում գիտակրթական հաստատություններում,

- տարբեր ոլորտների մասնագիտական կադրերի պատրաստում և վերապատրաստում,

- տեղեկատվական-քարոզչական ցանցի հայեցակարգի մշակում,

- քարոզչական համադրման մեխանիզմների ձևավորում,

- համալսարանի իրականացրած աշխատանքների մատուցում հանրությանը,

- հանրությանը մատչելի գրադարանի, համակարգչային ծրագրերի ստեղծում,

- գիտական նորագույն մշակումներին հանրության ծանոթացում:

### **ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՌԱՋԻԿԱ**

### **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների ոլորտը կարելի է բնութագրել որպես հայագիտություն, որի բովանդակությունն արդի փուլում էապես ընդլայնվել է, ներառելով մի շարք հասարակական գիտությունների (սոցիոլոգիա, քաղաքագիտու-

թյուն, պատմություն, փիլիսոփայություն, ազգագրություն, մշակութաբանություն, հոգեբանություն և այլն) հատույթում գտնվող հարցադրումներ և դրանց համապատասխան լուծումներ: Եթե անցյալում հայագիտության ուղղվածության վեկտորն ուղղված էր դեպի անցյալը, ապա ներկայումս սուր անհրաժեշտություն է զգացվում վեկտորի սլաքն ուղղել ապագային: Բացի այդ, առաջանում է հայագիտության բովանդակային նոր վեկտոր՝ միտված համակարգված մարտահրավերներին համարժեք պատասխաններ գտնելուն:

Անկախ պետականության պայմաններում հասարակության մեջ աստիճանաբար ձևավորվել է անհրաժեշտություն պարզաբանել, թե որո՞նք են մեր ազգային շահերը, նպատակները, առաջնահերթությունները 21-րդ դարում, ինչպիսի՞ ռազմավարություն և մարտավարություն է պահանջվում նրանց պաշտպանության համար երկրի ներսում և միջազգային ասպարեզում:

Այս իրողությամբ է պայմանավորված հիմնադրամի գիտական ուսումնասիրությունների թեմաների առաջնահերթությունը: Որպես հիմնական ընտրվեցին երկու փոխկապակցված հիմնախնդիրներ՝

ա. Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում

բ. Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ

*«Հայկական գործոնի ձևավորումը 21-րդ դարում» թեման ներառում է հետևյալ խնդիրների շրջանակը՝*

- արդի գլոբալ գործընթացները և ազգային պետության գործառույթները,

- ազգային շահեր, նպատակներ, առաջնահերթություններ. էություն, բովանդակություն,

- հայկական շարունակականության հայեցակարգը,

- ազգային և պետական շահ ըմբռնումների փոխհարաբերակցությունը,

- ազգային պետությունը, քաղաքացիական հասարակությունը և ժողովրդավարությունը,

- ազգային համաձայնության և միասնականության գաղափարը որպես ազգային պետության ներքին կայունության և զարգացման գրավական, վերջինիս հասարակական, քաղաքական, տնտեսական, հոգևոր և

մշակութային ռեսուրսները,

- Հայոց Ցեղասպանության ճամաչունը և Պահանջատիրությունը որպես հայկական գործոնի կարևորագույն բաղադրամասեր,

- Հայրենիք-Սփյուռք առնչությունների մոդելավորման հիմնախնդիրները,

- Սփյուռքի ազգապահպանման գործոնները և հայոց անկախ պետականության գործառույթները,

- ՀՀ արտաքին քաղաքականության և ռազմական դոկտրինայի հիմնադրույթները,

- ազգային պետության կառուցման տնտեսական հիմնավորումները,

- գիտակրթական և մշակութային քաղաքականությունը որպես ազգային պետության ձևավորման կարևորագույն բաղադրամաս,

- անկախ պետականության զարգացման ուղիներն ու հեռանկարները 21-րդ դարում:

*«Ազգային և պետական անվտանգության համալիր հայեցակարգ» թեման ներառում է խնդիրների հետևյալ շրջանակը.*

- ազգային անվտանգության համալիր ծրագրի հիմնադրույթները,
- հազար-բարոյական անվտանգության հիմնադրույթներ,
- մշակութային անվտանգության հիմնադրույթներ,
- կրթական-դաստիարակչական անվտանգության հիմնադրույթներ,
- գիտատեխնիկական անվտանգության հիմնադրույթներ,
- տնտեսական (ֆինանսական) անվտանգության հիմնադրույթներ,
- կոմունիկացիոն անվտանգության հիմնադրույթներ,
- տեղեկատվական անվտանգության հիմնադրույթներ,
- բնապահպանական անվտանգության հիմնադրույթներ,
- ժողովրդագրական անվտանգության հիմնադրույթներ,
- առողջապահական անվտանգության հիմնադրույթներ,
- սահմանամերձ շրջանների անվտանգության հիմնադրույթներ:

«Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ՝

**Անդրանիկ Սարգսյան** - ՀՀ Վարչապետ

**Մանուկ Թոփուզյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

**Կարինե Կիրակոսյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարարի տեղակալ

**Լևոն Սկրտչյան** - ՀՀ Կրթության և գիտության նախարար

**Տիգրան Սարգսյան** – ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

**Արա Ավետիսյան** – ՀՀ Կրթության և գիտության նախարարի տեղակալ

Իրավաբանական հասցե՝

Երևան-10, Կառավարական տուն, 1

Գրասենյակի հասցե՝

Երևան, Գարեգին Նժդեհի, 23

Հեռ. 44-04-72, 44-04-73

Ֆաքս (374 1) 44-04-73

E-mail: noravank@arminco.com